

8088

891.99  
9-70

Կարգադրական

1881



# ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

Ս. ՎԱՐԴԱՆԱՆՅ ԶՕՐԱՎԱՐԱՅ

*Հ. ԶՈՐԱ*  
ԶՈՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ.

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ Ս. ԳՆՈՒՆԻ ՎԱՆԵՑԻՈՅ.

Հասցե Երևան.

Ի ՎԱՂԱՐՁԱՊԱՏ.

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍԵՐՈՅ ԿԱԹՈՒՂՈՒԿԻ ԻՋՄԻԱԾՆԻ.

ՈՅԼ-1881

891.99

Գ-70

891.99

9-70 58

# ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

**Ս. ՎԱՐԴԱՆԱՆՅ ԶՕՐԱՎԱՐԱՅ**

ԶՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ.

48655514

48655514

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ ԿԵՆՏՐԱԼ ԿԱՆՈՒՄԱՆ ԿԱՆՈՒՄ

ՏՐԱԿՏՆԵՐԻ ԿԱՆՈՒՄ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ Ս. ԳՆՈՒՆԻ ՎԱՆԵՑԻՈՑ.

ՀԿԿ

9

Հասցե Երևան.




**Ի ՎԱՂԱՐՁԱՊԱՏ.**

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱԾՆԻ.

ՌՅԼ-1881

2003



2109

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

**ՀՐԱՄԱՆԱԻ**

**§ § ԳԵՈՐԳԱՅ Գ**

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

1881-188

2008

**ՅԱՌԱՅԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ.**

Թատերասէր ընկերութիւնը միայն այն ժամանակը կարող կլինի իւր նպատակին հասանել — ազգին օգտակար ծառայութիւն մատուցանել, երբ իւր ընտրած նիւթը վեր առած լինի բարոյականութիւն քարոզող վէպից կամ ազգային անցեալ ու ներկայ կեանքից, ոչ թէ Հայ ժողովրդեան բոլորովին անձանօթ օտար ազգաց անցեալ կեանքից:

Օտարի կեանքից վեր առած նիւթն, այն, մի առժամանակ իւր վայելքուչ ձևերով, հետաքրքիր տեսարաններով, ճարտար ու սահուն ոճով դրաւում է հանդիսականաց կամ ընթերցողաց ուշադրութիւնն, ընդունում է ջերմ ծափահարութիւններ, յափշտակելով զմայլմունքն և համակրութիւնն, բայց չի թողում մնայուն ազդութիւն, և չի արտադրում այն մեծ օգուտն, որ կարելի է յուսալ թատրոնից կամ թատերական ձևով շարադրութիւնից: Վասն զի մեք իբրև զբօսաՎայր կամ խաղատեղի չենք ընդունում թատրոնն, և ոչ իսկ մասնաւորաց շահասիրութեան միջոց, զորք երկրորդական նպատակներ են. մենք ընդունում ենք թատրոնն իբրև հասարակաց Իտիալիստիկ ամենայն հասակի և աստիճանի, դասարանի, դասարան ամենայն բարոյական կատարելութեանց և պակասութեանց: Մեր ընդունում ենք դերասանն իբրև «—»-իչ, կրկնչ, դասարանի, դասարանի, դասարանի, ամենայն տաղանդի և հասակի արիւն և գաղափար, ուրեմն և նորա ներկայացրածն պիտի լինի համապատասխանող իւր նպատակին ու պաշտօնին:

Անշուշտ մեր նպատակը չէ թատրոնի անշունչ շինքի պայծաութիւնն և յարմարութիւններն, այլ նորա մէջ ներկայացրած նիւթն յառաջ բերել, որից ծագումն ունի հասարակաց շահն ու վնասն, որովհետև թատրոնի բեմի վերայ դերասանի դիմաւոր ներկայանում են կեղծաւորն ու պարզամիտն, առաքինին և մոլին, խօսում են, վիճում են, խորհում են, զործում են, հրապարակաւ դատում են ու դատում և աւելի պարզն ասելով, հանդիսականն նկատում է իւր պատկերն դերասանի դիմակի տակը ինչպէս պայծառ հայելույ մէջ և ըստ այնմ խորհում է իւր վատ մտադրութիւնից ու

հետևում է լաւին: Ասան զի յայտնի ճշմարտութիւն է և անու-  
րանալի իրողութիւն, որ մարդը աւելի է հաւատում իւր աչքի  
տեսողութեանը քան ախանջի լսողութեանն, աչքի տեսածն աւելի  
խոր է սպաւորում մտքի մէջ քան լսածն:

Թատրոնի մէջ դերասանը իբրև ճշմարիտ պատկեր է իրականու-  
թեան, ներկայացնում է այն ամենը ինչ որ գործւած է յայտնի  
կամ զաղտնի, գործով կամ խորհրդով, թէ արդարութիւն և թէ  
անիրաւութիւն, թէ ճշմարտութիւն և թէ ստութիւն: Իսկ հանդի-  
սականներն պարզապէս տեսնելով իւրեանց վարքն ու բարքն՝ ըստ  
այնմ կլինին անաչառ դատաւոր իւրեանց գործոց և խորհրդոց:

Թատրոնի բեմի վերայ ակն յանդիման տեսնում է անիրաւն իւր  
անիրաւութեան չար հետեւներն, նախանձոտն՝ իւր սխալմունքն,  
կղեւնադործն, ազդուբացն՝ իւրեանց կրկէք պատիժն նկատում են  
բաց աչքով ինչպէս պարզ հայկէոյ մէջ, և ըստ այնմ կղիմեն դէպի  
ուղղութիւն, իսկ բարեգործն տեսնելով իւր արածի օգտակար հե-  
տևանքն՝ աւելի է քաջալերւում իւր վստմ գործոց մէջ և սկսում է  
դիւցադնական առարկնութեան հետեւել, կրկնապատկելով իւր ջանքն:

Մեծն Ասպրլիժն ասում է ընթէ ուսումնարանից կճնւին քաջեր  
և առարկնիներ, թատրոնից կճնւին զիւցադներ և հանձարներ:  
Ուսումնարանի մէջ կրթւում են մատաղահասներ, 7—20 տարեկան-  
ներ, որք իբրև առողջ անձինք ուսանում են առողջապահական  
կանոններ, իսկ թատրոնի մէջ 7—100 տարեկաններն, զանազան բա-  
րոյական ախտերով հիւանդացածներ բժշկւում են, ուսումնարանի  
մէջ ուսանում են հետեւել բնութեան բարոյականութեան, իսկ  
թատրոնի մէջ ուսանում են իբաց թողուլ արմատացած և երկրորդ  
բնութիւն զարձած մոլութիւններն և յետոյ հետեւել բնութեան  
բարոյականութեան. անշուշտ մեծ դժուարութիւն է հիւանդը բժշկելը  
քան առողջը պահպանել հիւանդութիւնից, մեծ աշխատութեան  
կարօտ է սխալ և սուտ գիտութիւններն — նախապաշարումներն մո-  
ռացնել և յետոյ ճշմարտութիւնն ուսուցանել: Վնարեղութեան  
ուսուցիչ ոմն կրկին վարձ էր պահանջում այն աշակերտից որ կան-  
խաւ տղէտ քնարահարի աշակերտած էր, ասելով թէ հեշտ է բը-  
նաւին չսովորածն ուսուցանել, քան վատ սովորածն մոռացնել և  
յետոյ ուղիղն ուսուցանել:

Ինչ դեր որ խաղում է պատմութեան կամ բարոյագիտութեան  
ուսուցիչը դպրոցի մէջ, նոյն դերն է կատարում դերասանը թատ-  
րոնի բեմի վերայ. ինչ են աշակերտներն ուսումնարանում, նոյն են  
հանդիսականները թատրոնում. իբրև փորձ մեր ասածների ճշմար-  
տութեան, Ս. Վարդանայ դուստր Շուշանիկի պատմութիւնը կամ  
Վարդանանց պատմութիւնն տան անգամ կարդալ տամք մի դար-  
գացեալ աշակերտի, յետոյ նոյն պատմութիւնը ներկայացնէք թատ-  
րոնի մէջ տղէտ անդրադէտ հանդիսականին, ապա աշակերտն և  
հանդիսականը թող սկսեն պատմել, մենք պիտի տեսնանք, որ հան-  
դիսական տղէտն աւելի լաւ է ըմբռնել պատմութեան ողին քան  
աշակերտն:

Թատրոնը բաց ի կրթարանի և դպրոցի պաշտօն կատարելուց, հայ-  
րենասիրութեան և ազգասիրութեան յարգոյ է, անտարբերութեան  
խիան է, լիմբութեան քնից զարթեցնելու հնչող ժամացոյց կամ ա-  
ֆալս է, յրուեալներն ի մի հաւաքելու դանձալ է և առաջադ-  
վերջապէս չկայ մի հիմնարկութիւն, որ կարող լինի մրցել թատրոնի  
հետ, երբ սա իւր նպատակից շեղած չէ, երբ ժողովրդեան մէայն դրօ-  
սավայր դառնալու դատասարուած չէ, կամ երբ անբարոյականու-  
թեան կամ շահասիրութեան գործարան չէ զարձել այս սրբազան  
հիմնարկութիւնն:

Թատրոնը հասարակաց դաղափարի, զգացմունքի, մտաց, սրտի,  
կրից և հողոյ կրթութեան ասածար է, նորա մէջ մի փոքրիկ ծիծաղն  
կամ լացն, բարկութիւնն կամ երկիւղը, ծափահարութիւնն և  
արհամարհանքն ունին իւրեանց որոշ նպատակներն. այն դերասանը,  
որ խելութեամբ մտել է իւր դերի մէջ, իւրացրել է սերտողու-  
թեամբ, ձայնով, շարժուածքով, կերպարանքով, կրքով, զգեստով  
և ամենայն հանգամանօք, նա քաջ դասախօս է, իւր աւանդած  
դասերն անջինջ ապաւորում է հանդիսականաց մտաց մէջ: Վեր-  
ջապէս այն թատերգութեանց նիւթն, որ առնուել է ազգային կեան-  
քից կամ տեղական սովորութիւնից, կուեննայ անշուշտ իւր բարո-  
յական և նիւթական օգուտներն:

Երանի թէ, ուր կայ մի քանի տուն Հայ ընտանիք, անշուշտ ու-  
նենայ մի եկեղեցի իւր հողեոր պարտքն կատարելու և միսիթարու-  
թիւնը ձեռք բերելու, ուր կայ եկեղեցի, նորա կից լինին և պիտի լի-

նին երկսեռ դպրոցներ, ուր պիտի դաստիարակին մեր ապագայ Հայ ծնողք, և ուր կան երկսեռ դպրոցք, նոցա կից լինի և մի թատրոնական շէնք, ուր դաստիարակին ներկայ ծնողք. երբ այս երկքն զուգրնթացաբար յառաջ գնան, անշուշտ Հայ ազգն հասած է լինում իւր նպատակին:

Թէ Եւրոպայի օտար ազգերն թատրոնին ինչ կարևորութիւն են տուել, կամ հին ազգերն և Հայերն ինչ եղանակաւ և ինչ նպատակաւ ձեռնամուխ եղած են այս հիմնարկութեանը, և թէ Հայոց մէջ երբ է սկսել, ո՞ւր և ո՞ւմ ձեռք, արդէն փոքր ինչ ընդարձակ յօդուածով բացատրել եմ Երարատ ամսագրի 1879 ամի մտրտ ամսաթուոյ մէջ: Սուտի պիտի սոյն ողբերգութեան վերայ համառօտ մի ակնարկ ձգելով կնքում եմ յառաջաբանս:

Եյս ողբերգութեան նիւթն վեր եմ առել ոսկերեան Եղիշէից Հայաստանեայց Եկեղեցւոյ և Հայ ազգի պաշտպանութեան համար արիւն թափող Ս. Վարդանանց նահատակութիւնն, որ կենդանի օրինակ և ապացոյց է Հայ ազգութեան և եկեղեցւոյ առնչակցութեան, սկսած Տրդատի օրից մինչ Վարդանանց պատերազմն, յընթացս 150 տարւոյ, արդէն Հայ ազգն և եկեղեցին զանգուել - մի խմոր էր դարձել. օտարներ երբ կամենում էին ազգութեան պատերազմ սկսել Հայոց դէմ, Հայք իւրեանց կրօնն վտանգի ենթարկւած էին տեսնում. երբ կրօնի պատերազմի կատկած կամ առաջարկութիւն էր լինում այլակրօն ազգերից, Հայք իւրեանց ազգութիւնը վտանգի ենթարկւած էին տեսնում. ուստի երբ Պարսիկն առաջարկում էր կրակապաշտութիւն, Հայոց եկեղեցական և քաղաքական գործող անձինք նոյն իսկ ամբողջ ազգն ազգութեան և հայրենեաց կործանումն նկատելով նոյն առաջարկութեան մէջ, միանում էին ընդդիմանալ, և առ այս չխնայել ոչ ստացւածք և ոչ կիանք, ինչպէս յայտնի տեսնուում է Եղիշէի և Վազար Փարբեցու ժամանակակից պատմութեան մէջ:

Հայ ազգն և եկեղեցին, որ մէկ ու կէս տարու մէջ մի խմոր էր դարձել, այժմ 19 տարու մէջ բոլորովին տարբացած, միացած է, որ այլ ևս անկարելի է ջուկել և առանձին մարմին կազմել, ինչպէս ջրով շաղախւած կաւն, երբ չորանում ու թրծվում է, այլ ևս ջուրն և կաւն չի կարելի ուրիշ մարմիններ համարել խեցու մէջ, թէև

իսկապէս այլ է ջուր, այլ է հող, որով միացած էր. թէև ազգն և եկեղեցին (կրօն) ունին իւրեանց առանձին նշանաբաններն: Ազգութեան և կրօնի հարցն երկար միջոց է որ վիճարանութեան ենթարկւած է Հայ մամուլի ձեռքով, հակառակ կուսակցաց փաստերն աւելի հաստատեցին միութիւնն քան թէ կարացին բաժանել, ազգային ամաթերթերն և օրաթերթերն պաշտպանեցին Հայ եկեղեցւոյ և ազգութեան առնչակցութիւնն և միութիւնն ընդդէմ աղանդաւորաց, նոյն հարցին նուիրել եմ և ներկայ երեք հատոր աշխատութիւններս, (Բնդդիմախօսութիւն Վարդանայ և Վասակայ, Ողբերգութիւն Վարդանայ, և Հայոց վարդեր և փշեր): Բնթերցողն եթէ նախապաշարեալ չէ յամառութեամբ, անշուշտ - կընդունի Հայ եկեղեցւոյ և ազգութեան միութիւնն և կըհամոզուի ու կհաւատայ, որ առանց Հայ եկեղեցւոյ Հայ ազգ չկայ աշխարհի վերայ:

Հայ ազգի եկեղեցւոյ անցեալն և ներկայն կենդանի օրինակաւ ներկայացնելու դիտաւորութեամբ ձեռնարկեցի Ե. դարու ողին պատկերացնել ընթերցողի առաջ, որոց ներդրամութիւն խընդրեմ, եթէ չեմ կարողացել պատշաճապէս ներկայացնել Վարդանանց հերոսներն. ես իմ նպատակիս կիսով չափ հասած կհամարիմ եթէ սոյն ողբերգութիւնս արժան դատուի ներկայացնել Հայ թատերասիրաց խմբից:

Վարդանանց Հերոսներից եկեղեցականաց դերերն զանց արած եմ, թատրոնի բեմի վերայ եկեղեցականաց իբր դերասան ներկայանալն արգելւած լինելուն համար, իսկ ուրացեալ եկեղեցականներն մէջ բերած եմ իբրև ոչխարազգեստ դիմակաւորներ, բնաւ չընդունելով նորանց իբրև եկեղեցական անձնաւորութիւն:

Անշուշտ ներելի է բանաստեղծին, իրականութիւնն կենդանացնելու նպատակաւ երբեմն պատմութիւնից շեղել, ուստի ողբերգութեանս վերջին գործողութիւնն հարազատ պատմութիւնից դուրս, ստեղծաբանութիւն է, իսկ Ե. Բ. Պ. գործողութեանց մէջ պահպանել եմ պատմական ճշմարտութիւնն, որքան կարելի էր և պահանջուում էր:

- Ա. Գործողութիւնը ներկայանում է Յաղկերտի պալատի մէջ:
- Բ. Գործողութիւնը ներկայանում է Մուշկան—Նիսալաուրաի վրանի տակը:
- Գ. Գործողութիւնը ներկայանում է Վարդան Մամիկոնեանի վրանի տակը:
- Դ. Գործողութիւնը ներկայանում է Տղմուտ գետի ափը, մի ապառաժուտ բլրա-կի վերայ, ամպամած զիշեր:


Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ձ Ի Ն Բ .

- ՅԱԶԿԵՐՏ Բ. արքայ Պարսից հալածող Գրիստոնէից.
- ՄԻՀՐԵՆԵՐՍԷՀ, ընդհանուր հրամանատար Պարսից.
- ՈՐՄՁԳԱՆ, մոզպետ.
- ԱՐՇԷՉ, պալատական ծառայ Յաղկերտի.
- ՄՈՒՇԿԱՆ—ՆԻՍԱԼԱՈՒՐԱՅ, զօրապետ Պարսից բանակի.
- ԳԵՆՇԱՊՈՒՀ, Պարսիկ վերակացու Հայաստանի.
- ԱՐՏԱՇԻՐ, ծառայ Միհրնեբուհի.
- Զօրք Պարսից.
- Երկու Գահիճ Պարսից.
- ՎԱՐԳԱՆ, Մամիկոնեանի դպրապետ Հայոց.
- ԱՏՈՄ Գնունի.
- ՄԱՆԱՃԻՀՐ Ռշտունի.
- ԳԱՐԵԳԻՆ Սրուանձտեան.
- ՎԱՍՍԿ, մարզպան Սեւեանց.
- ԶԱՆԳԱԿ, ուրացող երէց.
- ՊԵՏՐՈՍ ԵՐԿԱԹԻ, ուրացող երէց.
- Ուրացող զօրք Հայոց կուսակիցք Վասակայ.
- ԽՈՐԷՆ Խորխոռունի.
- ՀՄԱՅԵԱԿ Գիմաքսեան.
- ԱՐՏԱԿ Պալուէնի կամ Մոկացի.
- ՏԱՃԱՏ Գնթունի.
- ՎԱՀԱՆ Գնունի.
- ԱՐՄԷՆ Ընծայերցի.
- ՆԵՐՍԷՀ Քաջբերունի.
- ԳՍՐԻԿ Կին Վարդանայ.
- ՎԱՐԳ, Եօթնամեայ որդի Վարդանայ.
- ԶՈՐԲ ՀԱՅՈՑ, կուսակիցք Վարդանայ.
- ԳԱԴԻՇՈՑ Խորխոռունի.
- ՏԵՐՈՑ Բազրատողնի.
- ՎԱՀՐԱՄ, ծառայ Վարդանայ.
- ՀԱՄԱԶԱՍՊԵԱՆ Մամիկոնեան, եղբայր Վարդանայ.

Առաջնորդք այրուձիղյն Հայոց.

Ընկերակիցք Վարդանայ.

Կուսակիցք Վասակայ.



Գ Ո Ր Ծ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ի Ն Ա .

ՏԵՍԱՐԱՆ Ա .

(Յաղկերտի պալատումը, որ շքեղութեամբ զարդարած է ըստ Պարսկական սովորու-թեան):

Յ Ա Չ Կ Ե Ր Տ . (Առաւ Կիւն).

Շատ փտած և խարխուլ է այս գահը, քիչ ժամանակի մէջ թերևս ինձ կամ մերձաւոր ժառանգիս անդունդը պիտի գլորէ. թէև արտաքին շքեղութիւնը շլացնում է շատերին, թէև սորա վերայ նստողն անմահ է համարում և ասուածոց որդի: Այն անդունդը, որ չորս հարիւր յիսուն տարի առաջ բացւել է գահուս շուրջը, այն համաճարակ հրդեհը, որ բորբոքուում է, մի օր անշուշտ պիտի լափէ այս փտած դահն և գահակալին անյատակ անդունդը պիտի գահավիժէ: Զորս հարիւր յիսուն տարի է այն, որ մի կրօն է դուրս եկել Հրէաստանի աւերակներէից, օր ըստ օրէ աճում է և իմ սահմանակից ու դաշնակից հարեան ազգերը նորա գիրկը դիմեցին: Արեւմտեան կայսրութիւնը պաշտպան է դարձել նոյն կրօնին. Հայերն իւրեանց տոկոնութեամբ և քաջութեամբ խոր արմատ գցեցին այդ կրօնին: Արեւաց աշխարհն մեծ փնտսելի կրեց այդ կրօնից. թէև նախորդներէից շատերն հալածանքներով դիմադրեցին, բայց չկարացին իւրեանց նպատակին հասնել: Այս համաճարակ հրդեհը շիջուցանելու այս փտած գահս վերանորոգելու միակ միջոցն է իմ հպատակ ազգերն, իմ հարեան տկար տէրութիւններն մեր Մազդեզանյ կրօնին միացնել, ի մի ձուլել. վասն զի ազգի ամբողջութիւնը պահելու և տէրութեան գահը մշտնջենաւորելու միակ նեցուկը կրօնն է:

( Միհրնեբուհի կը յարէ . )

ՏԵՍԱՐԱՆ Բ .

ՅԱԶԿԵՐՏ ԵՒ ՄԻՀՐԵՆԵՐՍԷՀ:

Յ Ա Չ Կ Ե Ր Տ .

Արի, արեաց պարծանք, հաւատարիմ Վզուրկ Միհրնեբուհի, Միհր ասուածն այսօր մի բարի խորհուրդ յղանալ տուեց ինձ, այսինքն, թէ Արեաց ազգի գոյութիւնը և փառքը մշտնջենաւորելու և թէ միանգամայն իմ հր-պատակ ազգաց միտքն ու հոգին լուսաւորելու համար հրամայել բոլոր աշխարհաց, միմիայն Մազդեզանյ օրէնքն ընդունել, երկրպագել Արեգական և Կրակին, ի բաց թողուլ իւրաքանչիւր մուրաբալաներ, մանաւանդ Քրիստոնէութիւնն, որ օր քան զօր սկսել է տարածուել, մինչև անգամ Արեաց աշխարհի մէջ, իմ նախորդաց անհոգութեամբ կամ տկարութեամբ:

Մ Ի Հ Բ Ն Ե Ր Ս Է Է .

Մագրեղանց և Արեաց Տէր արքայ, այդ խորհուրդը, այդ նպատակը արդարև աստուածական է և Միհր աստուծոյ ազդեցութիւնն է, որով յորդորումէ Ձերդ քաջութեան ամենայն ազգ և լեզու մի Զրազեշտական ուղիղ կրօնիւ լուսաւորել, Տէր իմ, Գուք, այո՛, իբրև մարդ բնակումէք մարդկանց մէջ երկրի վերայ, բայց Ձեր միտքն ու կամքը և կարողութիւնն աստուածական է, արդէն աշխարհի երրորդ մասն իբրև մի ոսկի խնձոր ձեռքումդ բռնել էք և կարող էք առանց դժուարութեան և արգելքի հանդիպելու շարժել զայն ըստ կամաց Ձեր և Աստուծոց:

Յ Ա Ջ Կ Ե Ր Տ .

Մեզ սահմանակից կամ հպատակ ազգաց մէջ առաջին համարուելու պատիւն ունի Հայաստանը, որի մաքուր օդի և անմահական ջրի զօրութեամբ միշտ դիւցազներ են ծնել. Հայոց քաջութիւնն ու հաւատարմութիւնը շատ բարձր է և գրեթէ հաւասար Արեաց ազգի և Սասանեան տոհմի քաջութեանը, ուստի յիմարութիւն է թողուլ այնպիսի քաջաց տղաութեան խաւարի մէջ կորչել, հակառակ Աստուծոց կամաց. Հայեր, այո՛, արժանի են Արեգական, Միհր աստուծոյ և Որմզդի որդի համարելու, բոլորովին մեզ հետ միանալով կրօնիւ, լեզու և ազգութեամբ:

Մ Ի Հ Բ Ն Ե Ր Ս Է Է .

Այո՛, Տէր արքայ, Հայեր արժանի են այդ մեծ շնորհաց և պատուոյն. երբ նորա լուսաւորին, կմերժեն անշուշտ Յունաց կայսեր մոլար աղանդն, որով և կրկարեն նորանից քաղաքական յարաբերութիւնները, կմիանան Արեաց մեծ ազգի հետ հոգուով, կրօնիւ, ազգով և լեզու. ապա այն ժամանակը ամեն ազգեր փոքրիկ գետերի պէս դէպ ի մեծը կդիմեն, այսինքն դէպ ի Հայեր և միասին կթափին Արեաց լայնածաւալ ծովի մէջ:

Յ Ա Ջ Կ Ե Ր Տ .

Ազգերը տիրապետող ազգի հետի մի ձուլելու միակ միջոցը կրօնն է և լեզուն, Հայեր այդ երկուքն ևս շատ պինտ են պահպանում. իբրև անառիկ պատնէշ կանգնեցին Սահակ և Մեսրոպը իւրեանց գիւտերով, Հայոց լեզուի դպրութեան պահպանութեան համար տառեր հնարելով, որ այժմ՝ ընդհանրացել է Հայաստանի մէջ, նորա շատ հեռատեսութեամբ դիտեցին ապագայ վտանգն և շուտով պատրաստեցան. Առամշապուհն ևս շատ օգնեց այս մասին, չխնայեց ոչ աշխատութիւն և ոչ գանձ. վերջապէս մինչդեռ Հայոց կրօնական և քաղաքական ոյժերը միացած են, մեզ շատ աշխատութեան պէտք կայ. բոլոր յանցանքը իմ նախորդացս է, որ շուտով չխափանեցին Հայոց դպրութեան ջանքը. հրդեհը նոր սկսած միջոցակալ աշխատութեամբ է հանգչում, երբ ճարակումէ, մեծ աշխատութեան է կարօտում:

Մ Ի Հ Բ Ն Ե Ր Ս Է Է .

Արքայդ Արեաց, ամենայն դժուարութիւն կխնարհի Որմզդի կամաց, ամենայն նախապատրաստութիւն կոչնչանայ Ձեր քաջութեան և հնարագիտութեան առաջ. բաւական է որ տիրաբար և աստուածաբար հրամայէք, հրամանք և կատարումն մի և նոյն է համարեան շատ հեշտութեամբ կարելի է Հայոց կրօնական և քաղաքական միութիւնը բաժանել, բաւական է Սիւնեաց իշխան Վասակ Մարգարանին խոստանալ մեծ իշխանութիւն, բաւական է որ Սահակի և որ նոյն է Պարթևաց տոհմից կամ նոցա աշակերտներէց խլել հողերը իշխանութիւնը և արւի ագէտներին այսպիսով նորա ինքնին կդիմեն գէպ ի մեզ, Արդէն Վասակայ փեսայ Վարազդադան ի սրտէ ընդունել է Մագրեղանց կրօնը Վասակին փեսայու դիտմամբ, Վասակն ևս թէ իւր ոխերիմ թշնամուն յաղթելու և թէ միանգամայն Արեաց արքայէցդ աւելի պատիւ և փառք ձեռք բերելու յուսով՝ կամապիտի ընդունի մեր կրօնը, և աշխատի տարածել Հայաստանի մէջ:

Յ Ա Ջ Կ Ե Ր Տ .

Կեցցեն, Արեաց հաւատարիմ Վրուրի, ես բնաւ սխալած չեմ իմ ընտրութեանս մէջ, զքեզ ինձ խորհրդակից ընդունելով և ընդհանուր հրամանատար կարգելով, վասն զի քո իմաստութեան և հնարագիտութեան վերայ մոգպետան մոգպետն է զարմացել. ես արդէն քո առաջարկութեամբ հրակիրել եմ Հայոց այրուձին մեզ օգնելու պատրուակաւ, բայց Քուշանաց դէմ՝ ընդ երկար պատերազմը միջոցչտուեց ինձ միութեան գործն սկսել, որ մինչ ցարդ երկարեցաւ ի վնաս Արեաց. բայց ահա եկաւ և Որմզդան մոգպետը:

( Մ Ի Հ Բ Ն Ե Ր Ս Է Է ) .

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ .

Ա Ռ Ա Ջ Ի Ն Գ Ե Ի Ո Ր Մ Ջ Դ Ա Ն Մ Ո Գ Պ Ե Տ .

Յ Ա Ջ Կ Ե Ր Տ .

Ե՛կ, Աստուծոց բարեկամ, ժամ է միութեան գործն սկսելու, որոյ համար շարունակ թախանձում էիր:

Մ Ո Գ Պ Ե Տ .

Արքայ քաջ, Աստուծոները, որ քեզ իշխանութիւն են տուել տիրի ծովու և ցամաքի, ամենայն ազգ և ազինք քո գաւազանի ներքոյ ընկձել են ի հնազանդութիւն, այս ամեն բարեաց փոխարէն պահանջում են քեզանից միմիայն իւրեանց փառքն, այսինքն բառնալ ամենայն մոլար աղանդներ աշխարհի երեսից և միայն Միհր աստուծոյ, Արեգական և Առամական կրակին երկրպագու անել աշխարհը ըստ օրինաց Մագրեղանց:

Յ Ա Ջ Կ Ե Ր Տ .

Վեհայ լինին ինձ Աստուածք, որ նոյն իսկ այսօր պիտի հրամայեմ խստութեամբ բոլոր հպատակ ազգերիս թողուլ իւրեանց մոլոր ազանդները, զուրս գալ խաւարից, միայն Միհր աստուծոյ, Արեգական և Վռամական կրակին երգրպագել ըստ մոգական օրինաց. իսկ Հայերն իւրեանց քաջութեան և հաւատարմութեան համար իբրև Սասանեան տոհմ համարել, նոցա իմաստուն կրօնապետներն մոգաց տոհմի հետ միացնել, որպէս զի նոցա խելացի և հեռատես կառավարութեամբ և ջերմեռանդութեամբ Մազդեզանց օրէնքը համայն աշխարհին տիրէ, քանի անպակաս է լոյս և ջերմութիւն Արեգակից, անպակաս լինին և նորա երկրպագուներն:

Մ Ո Գ Պ Ե Տ .

(Որո՞ք Վերայ ելնելով) Արեաց տէր, Մազդեզանց քաջ արքայ, այսօր զու բոլորովին փոխուած ես երևում ինձ, աստուածացել ես, փառք քեզ և երկրպագութիւն. (որո՞ք Վեհայ) զոհեր մատուցելն քեզ, Յազկերտ անուան էլ մեհեան շինել, Յազկերտի սուրբ պատկերն էլ թող երկրպագել հաւասար Միհր աստուծոյ:

Յ Ա Ջ Կ Ե Ր Տ .

Ե՛լ Որմզդան մոգպետ, բարեկամ Աստուածոց, առատացուր Կրակի զոհերն սպիտակ ցուլերով և գիսաւոր նոխազներով, պարգևատրիր մոգերին, որ խրախուսելն իւրեանց սուրբ կոչման մէջ, և պատրաստելն գնալ Հայաստան և ուրիշ աշխարհներ քարոզել և լուսաւորել:

Մ Ո Գ Պ Ե Տ .

(Որո՞ք Վերայ) Փառք ձեզ անմահ Աստուածք, երկարեցրէք ձերունուոյս կեանքը, տեսնել զձեզ համայն ազգերից երկրպագած. գնամ զոհեր մատուցանել. (Վեհայ) կարծես թէ տկար ոտներս ոյժ առին, երիտասարդ զարձայ (լե Վեհայ):

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ .

Արեաց տէր, այս զոհագործութեան հանդիսին Հայ ձիաւորաց առաջնորդ Ատոմ, Մանաճիհր և Գարեգին ևս մասնակցելու շնորհ:

Յ Ա Ջ Կ Ե Ր Տ .

Հրաման է նոցա այսօր ինձ սեղանակցելու:

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ .

Հնորհ արքայի է. (լե Վեհայ):

Յ Ա Ջ Կ Ե Ր Տ ( առաւելի ) .

Գործի սկսելը կիսով չափ կատարել է նշանակում, ուրեմն այս խորհուրդ համարած զահս այսօր սկսուած նորոգել, թող ինձանով փառաւորի Արեաց ազգն ու Սասանեան տոհմ:

( Մեհայերէնէն և Որմզդան ին Վեհայ ) .

Տ Ե Ս Ս Ր Ա Ն Դ .

Յ Ա Ջ Կ Ե Ր Տ , Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ Ե Ի Ո Ր Մ Ջ Գ Ա Ն Մ Ո Գ Պ Ե Տ .

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ .

Հրամանաւ արքայի համայն Արեաց աշխարհ այսօր ուրախութեան հանդէս պիտի կատարել, իբրև զարազուխ պիտի արձանագրուի արքունի դիւանատան մէջ այս փառաւոր օրս:

Ո Ր Մ Ջ Գ Ա Ն .

Համայն արեաց աշխարհի ատրուշանաց աւետաւորներ ուղարկեցի, և հըրամայեցի պալատի Ատրուշանին հազար ցուլ և հազար նոխազ զոհել:

Յ Ա Ջ Կ Ե Ր Տ .

Իսկ Հայաստանը . . .

Ո Ր Մ Ջ Գ Ա Ն .

Հայաստանի լուսաւորութեան համար ահա բերի Մազդեզանց օրինաց սուրբ մատենան, Ջանդիվեստայն. (Կոչեց թի մոգապետայ թեք Վեհայ և հաճոյրէլ) սորանից քաղելով հաւատոյ եական կետերն ուղարկեմք նոցա, որ կարգան լուսաւորելն և փրկելն:

Յ Ա Ջ Կ Ե Ր Տ .

Քարի, ուրեմն և ես մի ինքնագիր հրովարտակաւ յորդորեմ Հայ նախարարաց, թողուլ իւրեանց մոլորութիւնն ու դիմել մեր ճշմարիտ և լուսաւոր օրինաց. իսկ զու Միհրներսէս, գրիր համաձայն կամաց և թելադրութեան Որմզդան մոգպետի. (լե Վեհայ):

Ո Ր Մ Ջ Գ Ա Ն Ե Ի Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ .

Օրհնեալ են կամք Աստուծոց և արքայի (Որմզդան Գրեյ և Վեհայ Բանաթ Կոչեց կարգուել Մեհայերէնէն ին Վեհայ, որոնց կերէն այս Վեհայն):

- Կեցցէ Յազկերտ, կեցցէ արքայ,
- Գահն իւր յերկինս թող բարձրանայ,
- Դեն Մազդեզանց յաշխարհ համայն
- Թող տարածուի միշտ յաւիտեան:
- Վռամական սուրբ ատրուշան
- Թող բորբոքի միշտ յաւիտեան.

Գրախոսի նման Վեհ Հայաստան  
Փառք տայ մեծի Արեգական,  
Անցցեն մեր Մոգք, կեցցեն Զանգիկք  
Անցցեն յաւերթ յաղթող Պարսիկք,  
Փառք արեգին միշտ անպակաս,  
Միհր ու Որմիզդ կայցեն ի կեանս:

Յ Ա Ջ Կ Ե Ր Տ:

(Աւարտելով) ահա այս հրովարտակը համայն ազգեր միոյն Արեգական  
երկրպագու պիտի անէ, (հետո՛ւ է հարանով) անմիջապէս ուղարկուի Հայ-  
աստան, շուտաւորութեան և միութեան գործը նախ Հայաստանից սկսելու  
եմք:

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ:

Աւարտեցաւ և մեր նամակը, յորում հրաւիրել եմք Հայերին ուղարկու-  
թեամբ քննել իւրեանց կրօնի ստուծիւնն ու յիմար վարդապետութիւնը  
և ըստ այնմ գիմել գէպ ի Մազդեզանց կրօնի ճշմարտութիւնն և անսխալ  
վարդապետութիւնը. երկու ճանապարհ եմք ցոյց տուել նոցա, կամ մի  
առ մի պատասխանել, կամ անմիջապէս պատրաստել Արեաց դուռը դա-  
լու: Եթէ Աստուածոց իմաստութիւն անգամ ունենան, չեն կարող պա-  
տասխանել, հերքել Մազդեզանց օրինաց ճշմարտութիւնը և հաստատել  
Քրիստոնէութեան մոլոր օրինաց վարդապետութիւնը, ուրեմն կամ պիտի  
ընդունեն և կամ պիտի հարկադրեն Արքայից մօտ գալ, որ այն ժամանա-  
կը աւելի հեշտութեամբ և խաղաղութեամբ կը յաջողի մեր նպատակն:

Ո Ր Մ Ջ Գ Ա Ն:

(Մի յեւէն հրովարտելն և մի յեւէն Միհրեբեհի նամակը բռնած) Ահա հրաւեր  
փրկութեան կորուսելոց, ահա այս հրովարտակը և այս նամակը ազգու-  
թեամբ պատուական, իսկ կրօնիւ անպիտան Հայերն Արեաց հետ պիտի միա-  
ցնեն, ատրուշանաց թիւը պիտի բազմապատկի, Վաղարշապատ, Գուին,  
Արտաշատ քաղաքներում կեդրոնական ատրուշաններ պիտի կառուցուին,  
Վառամական կրակն ամենայն տեղ անշէջ պիտի վառի, արքայն Յազկերտ  
իբրև միութեան հեղինակ պիտի փառաւորի յաւիտեանս ժամանակաց:

(Արշէլ իւր հրէն):

ՏԵՍԱՐԱՆ Ե:

ԱՌԱՋԻՆԻՔ ԵՒ ԱՐՇԷՁ:

Ա Ր Շ Է Ձ:

Արեաց տեր արքայ, ըստ հրամանի ձեր քաջութեան, Հայ նախարարք —  
առաջնորդք այրուածիոյն պատրաստ են ներկայանալ արքայից:

Յ Ա Ջ Կ Ե Ր Տ:

Հրաման է նոցա պատուով ներկայանալ, այդ հրովարտակն ու Միհրեբեհի  
նամակը դպրապետին յանձնէ, պատուիրէ՛ որ իսկականներն Հայաստան ու-  
ղարկէ, իսկ միւս աշխարհներն պատճենները ուղարկէ արագընթաց սուր-  
հանդակաւ:

Ա Ր Շ Է Ձ:

(Որմիզդն էջ հարևան հրովարտելն ու նամակն) Հատ բարի, կամք արքային եղի-  
ցի: (Իւր հրէն):

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ:

Արքայդ արեաց, պարզ և փառք աւելի գործ են տեսնում քան բռնու-  
թիւն, ըստ այնմ և խոստմունքն ու յոյսը աւելի շահաւետ են Ձեր նպա-  
տակն յառաջ տանելու՝ քան սպառնալիքը: պատրաստեմք Հայ նախա-  
րարաց համար շքանշաններ և առատ ոսկի: խոստանամք տալ նոցա աւե-  
լի մեծ պատիւ և իշխանութիւն, որպէս զի դրանք նոցա միտքերը:

Յ Ա Ջ Կ Ե Ր Տ:

Հրաման է քեզ պատրաստել, ինչպէս արժան ես համարում:

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ:

Մի Հայ որսալը մեծ է քան մի օտար ազգի յաղթութեամբ հպատակ  
անել, արդէն Վասակ և Վարդգվաղան Արեաց բարեկամ են, ինչպէս  
մարմնով նոյնպէս և հոգով, երկուքին ևս պատուով և խոստմունքով  
զրաւել եմք: այսօր Մանածիհր, Ատում և Գարեգին ևս որսալով, գրեթէ  
Հայոց մի մասն Արեաց հետ միացրած է համարուում. եթէ որ և իցէ եղա-  
նակաւ Վարդանն ևս միանայ մեզ հետ, գործն արդէն վերջացած կը հա-  
մարի:

Ո Ր Մ Ջ Գ Ա Ն:

Վարդանայ յամստութիւնն ու իւր կրօնի մէջ ունեցած պնդութիւնը,  
որպէս ես գիտեմ փորձով, կաթի հետ մտել է հոգու մէջ և հոգւոյ  
հետ միայն դուրս կը գայ, իսկ Մանածիհր, Ատում և Գարեգին ի մօտոյ  
ճանաչել չեմ:

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ:

Ահա եկան (գիտաւորն է) հրամեցէք պատուական նախարարք Հայոց:

(Մանածիհր, Ատում և Գարեգին իւր հրէն):

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ԱՌԱՋԻՆՔ, ՄԱՆԱՃԻՀՐ, ԱՏՈՄ ԵՒ ԳԱՐԵԳԻՆ.

Յ Ա Ջ Կ Ե Ր Տ.

Բարի է ձեր գալուստը, պատական նախարարը Հայոց, հաւատարիմք Արեւաց զրան, ի՛նչպէս է ձեր առողջութիւնը, գո՛հ էք Արեւաց արքայէս:

ԱՏՈՄ, ՄԱՆԱՃԻՀՐ ԵՒ ԳԱՐԵԳԻՆ.

(Գլուխներ խոնարհացելով ի նշան երկրպագութեան)

Ողջ եմք շնորհիւ Աստուծոյ, և հաւատարիմ ծառայք Արեւաց արքայիդ:

Յ Ա Ջ Կ Ե Ր Տ.

Ձեր քաջութիւնը, հաւատարմութիւնը և տիրասիրութիւնն արժանի են մեծ պատուոյ և փառաց, ուստի և ես կամենում եմ վարձատրել և խրատուսել զձեզ. Միհրնբութէ՛հ, յաղթութեան և հաւատարմութեան շքանշաններ տուր այս պատական նախարարաց:

Մ Ի Հ Ր Ն Ե Ս Է Հ.

Արժանի են այդ շնորհաց (իւ միմեծ):

Յ Ա Ջ Կ Ե Ր Տ.

Ապերախտութիւն է չգնահատել աշխատաւորաց անձնանուիրութիւնը:

ՏԵՍԱՐԱՆ Է.

ԱՌԱՋԻՆՔ ԵՒ ՄԻՀՐՆԵՐՍԷՀ.

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ.

Ահա նշան սիրոյ արեւաց արքայի մի (մի շահնախ իսկ իւր Գլուխներ, Աստուծոյ և Գարեգին իւրմեծ):

Յ Ա Ջ Կ Ե Ր Տ.

Հագցրու զորանց նաև մի մի ընտիր վերարկու պարսկական, ես արժան համարիմ այս պատական նախարարները Սասանեան տոհմի մէջ նշանակել և Արեւական որդի համարել:

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ.

Արժանի են և այդ փառաց, (իւ հաբեցնե մի մի պարսկական վերարկու իւր հաբեցնե նշան):

Ո Ր Մ Ջ Գ Ա Ն.

Տէր արքայ, զգրա արժանի են և մոգական պատուոյ և փառաց, (Հայ նախարարաց) ահա ձեզ պատկեր Արեւական, որ իւր լուսով և ջերմութեամբ

պահպանում է աշխարհի գոյութիւնն, (մի մի նշան իսկ իւր Գլուխներ, Հայ նախարարաց իւրմեծ արեւի ճառագայտներով)

Գ Ա Ր Ե Գ Ի Ն.

(Ինչպէ՛ս) Սորա կամենում են մեր մարմինը զարդարելով հողիներս կողովտել բայց ունայն յոյս. (բեռն իւրմեծ) Արքայ արեւաց, մեր արժանի չեմք այս շնորհաց, որ միայն Պարսից է սեպհական:

Յ Ա Ջ Կ Ե Ր Տ.

Եւ առաւել քան այդ արժանի էք. ես աստուածոց օգնութեամբ և հաճութեամբ մտադիր եմ լուսաւորել խաւար Հայաստանը, և միացնել Պարսից մեծ ազգի հետ, իմ երկրորդ մայրաքաղաք և աթոռ պիտի նշանակեմ Վաղարշապատ. Աստուծոյ ինձ փոխանորդ պիտի կարգեմ, Մանաճիհրին ընդհանուր Վզուրկ հրամանատար, իսկ Գարեգինն ևս սպարապետ. ես հաւատի տեղեկութիւն եմ ստացել, որ Վարդան իւր պաշտօնի մէջ անհաւատարիմ է գտնել, կամեցել է գնալ Յունաց աշխարհ, իսկ Վասակը վատնել է արքունի գանձը, նոցա պաշտօնները ձեզ եմ տալի, եթէ ապստամբութեան և անհաւատարմութեան խորհուրդ չլղանայք:

Ա Տ Ո Մ.

Արքայդ Արեւաց, Հայ ոչ մի ժամանակ փոխան բարեաց չար չէ հատուցել իւր բարեբարին, Հայն աւելի հաւատարիմ է եղել օտարին քան իւր ընկի ազգին, բայց այս պատուոյ և փառաց արժանի չեմք մեք, մեզանից աւելի արժանաւորները կան Հայաստանում, որ իւրեանց քաջութեամբ և հաւատարմութեամբ արդէն արժանացել են ձեր յատուկ սիրոյն:

Մ Ա Ն Ա Ճ Ի Հ Ր.

Այո, մեք արժանի չեմք ոչ այս ստացած շքանշանաց և պատուոյ վերարկուաց, և ոչ իսկ այդ մեծ պաշտօնին, եթէ Վարդանայ հաւատարմութեան վերայ կասկած կայ, մեք երեքովս կարող եմք երաշխաւորել նորա հաւատարիմ ծառայութեան առ Արեւաց Տէրդ, իսկ Վասակայ վերայ կասկածելը Վարազվաղանի չարախօսութեան հետեանքն է:

Գ Ա Ր Ե Գ Ի Ն.

Տէր արքայ, Սասանեան տոհմի պատանուանը, մոգական շքանշանի պատուոյն արժանի չեմք մեք, իսկ Վարդանայ և Վասակայ բարձր պաշտօններն ստանալու բնաւին ցանկութիւն չունիմք, եթէ մեք պատժոյ արժանի գործ եմք գործել, Անյուշ բերդին եմք արժանի, եթէ ոչ այդ տեսակ պատիւ և պաշտօն մեզ պատիժ եմք համարում:

Ո Ր Մ Ջ Գ Ա Ն.

(Ինչպէ՛ս) Այս տեսակ միաբանութիւն և եղբայրական սերը ոչ թէ Պարսից

մէջ, այլ և մեր աստուածոց մէջ էլ չկայ, ընկերին իշխանութիւնից զրկելը պատիժ են համարում իրանց. դժւար թէ սոքա որսացին պարգևով:

Յ Ա Ջ Կ Ե Ր Տ.

Ես շնորհակալ եմ թէ ձեր վաստակոց և հաւատարմութեան և թէ երաշխաւորութեան համար, Վարդան և Վասակ կմեան իւրեանց պաշտօնի մէջ ըստ ձեր ցանկութեան, իսկ դուք կստանայք արքունի գանձարանից առատ ոսկի, միայն թէ չապստամբիք Արեաց դռնից:

Գ Ա Ր Ե Գ Ի Ն.

Արքայդ արեաց, Հայերից նոքա միայն կարող են անհաւատարիմ լինելը որ ազգութաց և կրօնափոխ են լինում կամաւ, մի որ և իցէ ակնկալութեամբ, վասն զի իւր բնիկ ազգին և կրօնին անհաւատարիմն այլոց աւելի անհաւատարիմ է լինում, և նոքա միայն կապստամբին, որ կստիպեն ազգութաց և կրօնափոխ լինել. ուստի մեք ազգութաց չեմք որ անհաւատարիմ ևս լինիմք և զեռ ձեզանից ստիպած չեմք կրօնափոխ և ազգութաց լինել, որ ակամայ ապստամբենք, ուրեմն մեզ վերայ կասկածելոյ բնաւ առիթ չկայ:

Յ Ա Ջ Կ Ե Ր Տ.

Դուք թէև մարմնով հաւատարիմ էք Արեաց դրան, բայց հոգով Յունաց մոլորեալ կայսեր հետ դաշնակից էք. յանցանք է ինձ առանց ձեր հոգւոյ բարեկամութեան՝ մարմնոյ բարեկամութիւնն ընդունել, վասն զի հոգին միշտ մարմնոյ հակառակ գոլով, աշխատում է իւր ցանկութիւնը և նպատակն յառաջ տանել, և որպէս զի Հայոց ցոյց տուած հաւատարիմ ծառայութիւնը չունենայ իւր արգիլառիթն, ես արժան համարեցի նախ նոցա հոգւոյ բարեկամութիւնն ընդունել, միացնելով Պարսից մեծ ազգի հետ իբրև մի ազգ, մի կրօն, մի լեզու և մի հայրենեաց որդի, որոյ համար այսօր հրովարտակ գրեցի, որ ամբողջ Հայաստան դառնայ իւր մուր ճանապարհից, միմիայն Միհր Աստուծոյ, Արեգական և Վառամական սուրբ կրակին երկրպագեն մոզաց օրէնքով, որպէս զի հոգւով և մարմնով բարեկամանան Արեաց դրան, և դուք աւելի բազում որ էք, որ անդրանիկ հաւատացեալ և միութեան առաջնորդ էք լինում այսօր:

Գ Ա Ր Ե Գ Ի Ն.

Տէր արքայ, մարմինք մեր ծառայ են Արեաց արքայից, իսկ հոգիք մեր միմիայն երկնքի և երկրի Արարիչ Աստուծոյ ծառայ են և երկրպագու, որից զատ չկայ այլ Աստուած, ոչ երկնքի և ոչ երկրի վերայ:

Յ Ա Ջ Կ Ե Ր Տ.

(Ծիծաղելով) Ո՞ր Աստուծոյ, այն աղքատ հիւսան որդւոյն, որուն պաշտումն խելքով ազբատ Յոյները, և առանց ամաչելոյ քարոզում են թէ:

և մեր Աստուած մատնեցաւ, չարչարեցաւ, խաչեցաւ, մեռաւ և թաղեցաւ, և այլն անհաւատալի բաներ: չար դեւեր—Արհմի արարածներ և ոչ իսկ Արհմն չեն բռնուում մարդկանցից ու տանջում, այդ ի՞նչ տեսակ Աստուած էր, որ մարդիկ կարողացան բռնել և սպանել նորան, Աստուծոյ վերայ այդպիսի յիմարութիւններ պատմելը մեծ ամօթ է ասողին, լսողին և հաւատացողին: Ձեզ նման քաջ և խելացի անձինք պէտք է քաջ ի միտ անեն, որ այդ ամենը Յունական խարէութիւն է և մոլորութիւն:

Ս Ս Ո Մ

(Գրեթէ) Ահա յայտնեցաւ ամբարշտի միտքը, սուր օրինաւոր պատասխան և մեր կողմից, ահա հասաւ մեր պսակստանալու ժամն, այս ամենն ունայն են և խարուսիկ:

Մ Ա Ն Ա Ճ Ի Հ Բ.

(Գրեթէ) Դու ի մանկութենէ ուսեալ ես, հաստատիր մեր կրօնի ճշմարտութիւնն ու խայտառակիր դոցա յիմարութիւնը:

Գ Ա Ր Ե Գ Ի Ն.

Արքայ քաջ, զու ուստի՞ գիտես այդ բաները մեր Տէր Յիսուսի վերայ:

Յ Ա Ջ Կ Ե Ր Տ.

Ձեր մոլոր օրինաց գիրքը, զոր աւետարան էք կոչում, կարդալ սուրի և տեղեկացայ:

Գ Ա Ր Ե Գ Ի Ն.

Տէր արքայ, երկնային գանձարանի և գրախտի հանդիպեցար, բայց ափսոս, որ միայն դռնից գիտելով յետ դարձար, ի՞նչի փոքր ինչ աւելի կարդալ չտուիր, սուր պիտի լսէիր նորա փառաւոր յարութիւնն, երկնք համբառնալ, կրկնորդ անգամ գալստեան խոստումն, ահաւոր դատաստանն, իւր հաւատացող բարեգործաց վարձատրութիւնն և ձեզ նման մոլորելոցք անվերջ պատիժ յաւիտենական կրակի մէջ:

Յ Ա Ջ Կ Ե Ր Տ.

(Ժողովով) Գիտեմ և այդ ամենը, բայց բոլորն ևս խարէութիւն է և ասասպելաց առասպել:

Գ Ա Ր Ե Գ Ի Ն.

Տէր արքայ, կթէ նորա մարմնաւոր չարչարանաց հաւատում ես, աւելի պիտի հաւատաս նորա հրաշալի յարութեանը, համբարձմանն ու երկրորդ գալստեանն, այդ բաներն ևս նոյն սուրբ գրքի մէջ են զրուած:

Յ Ա Ջ Կ Ե Ր Տ.

(Ընդհարելով) Այլ լիւր, անզգամ, յանգու գն պատանի, այսչափ սիրոյն այդ փոխարէն, դահիճ, դահիճ, (երկու գահից իջ մտնելով) կողոպտեցէք

այդ անդամն, (իւ հարտն) կապեցէք ծանր շղթաներով, (իւ հարտն) տարէք, ձգեցէք մահապարտից խաւար ու գեճ բանտի մէջ. (Ի սե շարի հարտն) զնա յանդանութեանդ պտուղը վայելիր, եղիր օրինակ ապստամբաց:

Գ Ա Ր Ե Գ Ի Ն .

(Գարտն) Ես կը գնամ պսակ ստանալու, քաջ ընկերք, հետեւեցէք ինձ, (Գարտն հարտն):

Յ Ա Չ Կ Ե Ր Տ .

Միհրանի սեղանը պատրաստ է:

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Ե Հ .

Ըստ Ձեր հրամանին կը պատրաստի այս բոլորիս, (Գարտն հարտն):

Ո Ր Մ Չ Գ Ա Ն .

Անփորձ պատանդն պատիւ տալը նոյն է թէ լքուածինն ու յանդանութիւնը խրախուսել, (Միհրանի և Արշէլ իւ հարտն):

Տ Ե Ս Ա Ր Ս Ե Ն .

ԱՌԱՋԻՆՔ, ՄԻՀՐՆԵՐՍԵՀ ԵՒ ԱՐՇԷԶ.

Ա Ր Շ Է Չ .

(Ինչիւն) Այսօր բոլոր Պարսկաստան ուրախութեան հանդես է կատարում, (Ինչիւն պարտադրում):

Յ Ա Չ Կ Ե Ր Տ .

Անհարին մոլորութիւնն ու մոլեռանգութիւնը մոռանալ է տալի մարդու իւր չափն ու սահմանը. նստեցէք պատուական նախարարը Հայոց, Ատոմ և Մանաճիհր, կերէք մեզ հետ Միհր Աստուծոյ զօհ, և ապա գնանք Ատուշանի մէջ երկրպագել սուրբ կրակին:

Մ Ա Ն Ա Ճ Ի Հ Ր .

Տէր արքայ, ամենախոնարհ պաղատանք խնդրեմք, մի՛ ստիպէք զմեզ մեր սուրբ օրինաց դէմ մեղանշել, որ արգելում է մեզ կոոց զօհն ուտելը:

Յ Ա Չ Կ Ե Ր Տ .

Ճանաչեցէ՛ք իմ սէրս, յարգեցէ՛ք հրամանս, և ստացէ՛ք Հայաստանի թագն ու գաւազանը, թողէ՛ք այդ աղքատ հիւսան որդին, զոր Հրէայք իբրև անօրէն, մեղապարտ և ապստամբաց զուխ սպանեցին խաչի վերայ, Ես իմաստնոց քննել տուի ամենայն ազգաց կրօնները, բոլորն ևս սուտ ու սխալ գտան, ուստի ընտրեցին միմիայն Մազդեզանց օրէնքն, և ես հրամայեցի, որ ամենայն ազգ և ազինք, որ իմ իշխանութեան ներքոյ են,

մէկ օրէնքի հպատակին, արդէն հրովարտակ եմ ուղարկել Հայաստան և գուցէ մինչ դուք հասնիք, ամենայն տեղ արդէն լուսաւորած տեսնէք:

Ա Ս Ո Մ .

Արքայդ Արեաց, մեր յօժար եմք ի մահ գիմել ի սէր ձեր, բայց այդ պահանջը ծառայութիւն չէ, այլ մեր կենդանի Աստուծոց յայտնի ազըստամբութիւն և կամաւ գերութեան մէջ մտնել է, որ ոչ ձեզ արժան է առաջարկել և ոչ մեզ ընդունել:

Յ Ա Չ Կ Ե Ր Տ .

Քաջ խորհեցէ՛ք ձեր վախճանի վերայ, տեսէք թէ ո՛ր էք և ո՛վ է ձեզ հրամայողը:

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Ե Հ .

Նախարարը Հայոց, մի՛ յիմարանայք Գարեգնի նման, յարգեցէ՛ք արքայի կամքը, թողէ՛ք ձեր յիմար և մոլար աղանդը:

Ո Ր Մ Չ Գ Ա Ն .

Պատուական եղբարք, թողէ՛ք այդ յիմարութիւնը, որ ձեր խաբեբայ վարդապետաց ուսուցածն է, մի՛ ապերախտ գտնիք Արեգական, որ իւր լուսով և ջերմութեամբ պահպանուէ ձեր կեանքը:

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Ե Հ .

Տեսէ՛ք Արեաց մեծ արքայի անհուն սէրը դէպի ձեզ, որ շերտերով է խօսում ձեզ հետ, հաւատացէ՛ք, որ ոչ մի Պարսիկ մարդ անպատիժ չէր մնում, եթէ այսչափ ընդդիմանայր արքայի հրամանին:

Ա Ս Ո Մ .

Արքայի այս տեսակ սէրն ու ներողութիւնը թշնամութիւն է մեզ և ատելութիւն, միշտ ստիպում է մեզ, որ մեր մեր լոյսը փոխենք ձեր խաւարի հետ, մեր անգին մարգարիտը՝ ձեր անպիտան նիւթի հետ, մեր շունչ և կենդանութիւն տուող Աստուածը, ձեր անշունչ Աստուածոց հետ . . .

Մ Ա Ն Ա Ճ Ի Հ Ր .

Եւ մի՛թէ արքայի և մոզպետի տուած այս պարգևները կարօղ են մեզ խաբել. մահապարտի մի սե շապիկ և ծանր շղթայն սորանցից աւելի յարգ ունին մեզ մօտ. կամենում էք այս անցաւոր և անարգ պարգևներով խիղ, կողոպտել մեր անանցանկի պարգևն ու փառքը, առէ՛ք ձեր խաբուսիկ պարգևները, տուէ՛ք մեզ շղթայ . . .

Յ Ա Չ Կ Ե Ր Տ .

(Բարեբեմեք) Ապերախտ ապստամբներ, սէրն ու քաղցրութիւնը ձեր յամառութիւնները չեն կակղացնում, միայն խստութիւն և դառն տանջանք կարօղ են ձեզ ուղիղ ճանապարհի վերայ բերել, կրկին ստացէ՛ք ինձ:

պիտի հնազանդիք թէ ոչ, պիտի թողնուի ձեր յիմարութիւնը պիտի ուտէք Միհր Աստուծոյ զոհը, երկրպագութիւն պիտի անէք Արեգական և Կրակին:

Մ Ա Ն Ա Ճ Ի Հ Բ .

Ի զուր մեզ մի' փորձէք, մի' հարցանէք, մեք մեր սուրբ հաւատոյ համար դէձ ու մութ բանտը մեզ փառաւոր պալատ ենք համարում, շղթայքն իբրև պատույ մրցանակ և յաղթութեան պսակ, ամենայն տեսակ դառն տանջանքներ մեզ իբրև վարձ և պատիւ ենք համարում. ոչ երկնաւորներ և ոչ երկրաւորներ կարող չեն քակել զմեզ մեր պինդ հաւատքից, զոր ոչ թէ իբրև պատու ենք հապել, որ ուզած ժամանակը հանենք կամ փոխենք, այլ իբրև արիւն և հոգի խառնած ու միացած ենք մեր մարմնոյ հետ:

Յ Ա Չ Կ Ե Ր Տ .

(Աւելի քաղցր-խեղճ) Ահայ լինին ինձ Միհր Աստուած, Որմիզդ, Արեգակն, Կրակ և ամենայն պաշտելիք մեր, որ ամբողջ Հայաստան աւերակ պիտի անեմ, այնպէս որ ճպուռն իւր բոյն զնկու տեղ չգտնէ, եթէ բոլոր Հայեր ձեր յամառութեան հետեւն, իսկ ձեր ընտանիք, որդիք, կանայք, ինչք և ստացածք յարբուսիս պիտի գրաւեմ, զձեզ Սարաստան ու Խուժաստան պիտի ուղարկեմ՝ հանքերու մէջ բանելու, և թերևս ճանապարհին խորշակից սատակելով՝ ձեր մարմինները թռչնոց և գազանաց պաշար լինին, որպէս զի ամենայն անհնազանդք ձեզ տեսնելով զգուշանան, Աերջին անգամն է, պատասխանեցէք, պիտի հնազանդիք թէ ոչ:

Ա Տ Ո Մ .

Մեք արդէն պատրաստ եմք այդ ամեն սպառնացածդ տանջանաց, որով մեզ մեծ վարձուց արժանի կանէք:

Մ Ի Հ Բ Ն Ե Ր Ս Է Հ .

Յիմար անզգամներ, գէթ ձեր անմեղ որդւոց խնայեցէք, որոց կորուստեան պատճառ պիտի լինիք:

Ա Տ Ո Մ .

Պապանձիր անմիտ շողբորթ, այդ խորհուրդը Առամ արքայն ևս յղացաւ, բայց վիժեց, չկարաց ծնանել, զուք ևս ներկայի և ապագայի առաջ ամօթահար պիտի լինիք, վասն զի մեծ է այդ յղացածդ և յղացողի որովայն պիտի պատահէ, ձեզ նման դժուրքի դոներ պիտի չկարենան յաղթել մեզ, դուք պիտի զարնուիք մեր հաւատոյ քարի վերայ և պիտի փշուիք և փոշի դառնայք:

Մ Ա Ն Ա Ճ Ի Հ Բ .

Ոչ Յազկերտ արքայն, ոչ Արեգակ, ոչ Կրակ, ոչ Միհր, ոչ Որմիզդ, ոչ տանջանք և ոչ իսկ մահ չեն կարող ոչ թէ զմեզ այլ և ոչ մի տպէտ

Հայ պառաւ քակել իւր պինդ և հաստատ հաւատքից, ոչ այժմ և ոչ յաւիտեանս յաւիտեանից, ահա ձեր տուած պատիւը մեք կամաւ ոտնակոխ եմք անում, ( քեզնի յքելով շտանաներն ):

Ո Ր Մ Չ Գ Ս Ն .

(Դողբողով) Տէր արքայ, Աստուածներ այժմ զմեզ անդունդ պիտի իջնենն, որ համբրում եմք իւրեանց թշնամեաց այսչափ նախատել Մագդեղանց արբութիւնք, սքքա անարժան են կենաց և լուսոյ, ոտնակոխ արին Արեգական սուրբ պատկերը (Քեր է արուն- և համբուրելով ծոց քուն-):

Յ Ա Չ Կ Ե Ր Տ .

Գահիճ, դահիճ, (նէր- և փոխել երես- քահիճ) մերկացրէք և այդ երկու յանդուգն և ապերախտ անհաւատարիմներին, մեր և Աստուածոց ատելիներին, (և Բեբեյն և Բ Բ և Զապիլ և Կապեցէք ծանր շղթաներով, (և Կապիլ շղթայով) տարէք Անյուշ բերդի գէճ և խաւար բանտի մէջ գցեցէք քաղցած և ծարաւ:

Ա Տ Ո Մ Ե Ի Մ Ա Ն Ա Ճ Ի Հ Բ .

(Մեծ արեւ- քահիճ) Փառք քեզ Տէր Յիսուս, որ արժանի արիր զմեզ քո սուրբ անուան համար կրել այս պատիժը, որոյ փոխարէն անշուշտ պիտի ստանանք անանց կեանք:

Յ Ա Չ Կ Ե Ր Տ .

Հեռացրէք այդ ապերախտներն, (ձեծելով քո- քս և հան- ) վերցրէք սեղանը (Արշա- քեր- քս սեղանը) Միհրներսէհ, Հայաստան ուղարկիր Գննչապուհին իբրև վերակացու, գործադրել հրովարակիս հրամանը, նեղել մոլորեալներին խստապահանջ հարկերով, մինչ յետին աստիճան աղքատութեան հասնեն. նոցա եկեղեցիներից, վանքերից, եկեղեցականներից կրկնապատիկ հարկ առնել, մոլորեալ վերջին ձերուսուց և նոր ծնած երախայից, չէն և անչէն տեղերից հարկ առնել. նաև հրդեհել և այրել եկեղեցիները և նոցա մնար գրքերն Յունաց և Հայոց ու Աղուանից լեզուով գրած, Հայաստանի մէջ ոչ մի կտոր մագաղաթ չգտնել, Հայ պարոններ փակելն, զպրութիւնն ու լեզուն արգելի, իսկ ո՛վ որ սիրով յանձն է առնում Մագդեղանց օրէնքը, նորան տալ իշխանութիւն, առատ պարգև, և ազատութիւն յափշտակելոյ ապստամբաց ինչքն ու ստացուածքը, նաև Պարսկաստանի մէջ իսպառ արգելի Գրիստոնէութիւն, նոյն հարւածոց և տանջանաց մատնելն ամենայն ազգ և ազինք, որիմ իշխանութեան ներքոյ են և չեն կամենում պաշտել իմ պաշտածներս: (Արշա և Բեբե):

Մ Ի Հ Բ Ն Ե Ր Ս Է Հ .

Արքայդ Արեաց, Գննչապուհոյ խորագիտութիւնն, անհնարին ազահու- թիւնն և անգթութիւնը չափ ու սահման չունի. նա մի տարւոյ մէջ ամբողջ

Հայաստան այն վիճակին կարէ հասցնել, ինչպէս մի մեծ հրդեհ չոր անտառն, իւր հետ ունեւորվ սաստիկ փոթորիկ:

Յ Ա Ձ Կ Ե Ր Տ .

Աւելի թող աշխատի թշնամութիւն սերմանել եկեղեցականաց և աշխարհականաց մէջ, նախարարաց և ժողովրդեան մէջ և զանազան կուսակցութիւնների բաժանել. Հայոց քաջութիւն և միութիւն հրաշքներ են գործում, Հայն օտարից չի յաղթւում, Հայը Հայից է յաղթւում, Աղուանից, Արաց և այլն աշխարհներ ևս ուղարկիր խտտապահանջ հարկահաններ: (Արշէլ և Տրեխ):

Յ Ն Ա Ր Ա Ն Թ .

Ա Ռ Ա Ջ Ի Ն Բ Ե Ի Ա Ր Շ Է Ջ .

Ա Ր Շ Է Ջ .

(ԴՊՊՊՊՊՊ) Տէր արքայ, Հայ ձիաւորաց գունտն յափշտակեց Ատոմին և Մանաճիհին զահաւան ձեռքից և թողրեց արծույ արագութեամբ դէպ ի Հայաստան:

Յ Ա Ձ Կ Ե Ր Տ .

(Բարիտիւն) Ի՞նչ եմ լսում, Ատոմն ու Մանաճիհը աղաւթեցան. նախ զահաւաններն գլխաւուն, որ չկարողին պահպանել, իսկ Ատոմ և Մանաճիհը իւրեանց գնտովն իսկոյն սրախողխող լինին:

Մ Ի Հ Բ Ն Ե Ր Ս Է Հ .

Եթէ թուռն դառնան, չեն կարող աղաւթել ձեռքիցս, (Իւրի):

Մ Ո Ղ Պ Ե Տ .

Գնամ և ես առատ զոհերով Աստուածոց օգնութիւն հայցել, (Իւրի) անիծեալ լինի Արշէն, որ ամեն անյաջողութեան և ձախորդութեան մայր է: (Իւրի):

Յ Ն Ա Ր Ա Ն Թ .

Յ Ա Ձ Կ Ե Ր Տ (առանձին)

(Շոտ շոտ ձեռքով) Հայոց յամառութիւնը հաւասար է իւրեանց քաջութեան, յամառ, ապստամբ և քաջ՝ անգամ Աստուածոց կարող է յաղթել... ես վախում եմ, որ չկարենամ մի հօտ և մի հովիւ, մի կրօն, մի ազգ և մի լեզու անել բոլոր հպատակներս, թէ և լեռներ և գաշտեր արիւնով ներկեմ. եթէ պատանի Գարեգին, Ատոմ և Մանաճիհը պոչափ ընդդիմացան, Աարգան սպարապետը, որ իւրեանց կրօնապետի թոռն է, և նորա արիւնն է կրում, ինչքան աւելի պիտի ընդդիմանայ, և գուցէ շատ մեծ զժւարթութեամբ կարենամ յաղթել նորան... աս, ես նախապատիւ

եմ համարում հարիւր պարսիկ կամ մոգ Հայոց կրօնին դառնալ, միայն թէ Աարգանայ պէս մի Հայ մոգական կրօնն ընդունէր... Ի՞նչ Միհր Աստուած, երկարացուր օրերս, մինչ տեսնեմ այս խարխուլ գահիս վերանորոգութիւնը, Հայեր մեզ հետ ի մի ձուլելով... Արեգակն, լուսաւորիր Հայաստան քեզ երկրպագելու, չստիպեմ ակամայ տանջանաց և մահուան մատնել անպարտելի դիւցազունք, չքանդեմ զրախտի նման Հայաստան, որ աշխարհիս սկզբից ամենայն թագաւորաց նախանձու առիթ է եղել և շատ քիչերն են յաջողել ձեռք բերել, նոյնպէս ապագայ դարուց մէջ էլ շատերն նախանձելի պիտի լինի. Ա՛հ, Հայեր, ամենայն պատույ և փառաց արժանի Հայեր, իբրև որդի պիտի սիրէի զձեզ, եթէ յանձն առնէիք պաշտել մեր պաշտածն, ընդունէիք ազատ ինամութիւն անել մեզ հետ. Հայ կանայք դիւցազներ են ծնում, Հայ արիւնը բոլոր Պարսկաստանը պիտի աղնուացնէ և քաջաց որորան պիտի դարձնէ... Միհր Աստուած, երկարացուր կեանքս մինչ յաջողեմ տեսնել Հայեր Արեաց հետ միացած—ի մի ձուլած, տեսնել Աաղարշապատում Մայր Ատրուշան...:

Ա՛հ, յոյս և յուսահատութիւն հաւասար տիրում են սրտիս. Արեգակն պայծառացուր Հայաստան, լուսաւորիր Հայոց միտքը, հազար Պարսկաստան չարժէ Հայաստան, հազար մոգ և մոգպետ չարժէ մի ազէտ քահանայ, միայն թէ Մազդեզանց օրէնքն ունենայ. մի մեծ գունդ զօրք Պարսկական չարժէ մի Հայ զինուոր. մի անձանթ Հայու հաւատարմութիւնն ու տիրաւորութիւնը աւելի մեծ է քան իմ հարազատ որդուցս հաւատարմութիւնը... քաջազուն Հայեր, դիւցազն Հայեր, ասանիծին ձեզ մուրեքնողները, բայց սակայն . . . (յեթ է տալուս):

Վարաճայրն իջնում է:



Գ Ո Ր Ծ Ո Ղ Ո Ի Թ Ի Ի Ն Բ .

ՏԵՍԱՐՄԵՆ Ս .

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ ԵՒ ՄՈՒՇԿԱՆ—ՆԻՍԱԼԱԻՈՒՄՏ .

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ .

Ահա մտեցանք Հայաստանի սահմանին, տակաւին ոչ որ ընդդիմօ գիր չէ երևում, թերևս Աստակ մարդպան և Գենշապուհ Համազնի են ժողովօղին չլսել Աարդանին .

ՄՈՒՇ—ՆԻՍԱԼ .

Եթէ խաղաղութեամբ, առանց պատերազմի իշխենք Հայաստանին, կարելի կը լինի Աստուածոց և արքայի կամքը կատարել, ապա եթէ Հայերը միացած ապստամբեն և պատերազմեն մեր դէմ, մեր անշուշտ կը յաղթենք և ամօթապարտ կը լինինք թէ ներկայի և թէ ապագայի առաջ . Հայոց յամառութիւնը ոչ պատուով, ոչ խստութեամբ և ոչ մահով չի մեղմուի . նոցա կրօնն աւելի մահով է պայծառանում, իւրաքանչիւր սպանուածի ոսկորներն անգամ հարիւրաւոր հետեղներ են բուսցնում իւրեանց կրօնին . վերջապէս ես քաջ համոզուել եմ, որ Հայաստանում անկարելի է Մոզական, օրէնքի հաստատութիւն գտնել մշտապէս, եթէ Հայերը միաբանած լինին .

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ .

Մոռչկան—Նիւսալաւուրտ, ես այդչափ երկչոտ չէի համարում զքեզ :

ՄՈՒՇ—ՆԻՍԱԼ .

Այո՛, Տէր իմ, ես շատ վախեցնում եմ, և ակամայ յանձն առու եմ լինում Հայոց դէմ ելնել, վասն զի մեծ դժուարութիւնների պիտի հանդիպիմ .

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ .

Արեաց բոլոր ոյժը քեզ թիկունք է, ի՞նչ տարակոյս կայ յաղթութեան :

ՄՈՒՇ—ՆԻՍԱԼ .

Ես յօժար էի այս բանակի տասներորդ մասնով ուրիշ ազգի դէմ գնալ, քան այսչափ ահեղ կարծուած պատրաստութեամբ Հայոց մի մասի վերայ գնալ, վասն զի ես մազերս պատերազմի դաշտերի մէջ եմ սպիտակացրել, չեմ տեսել, որ Պարսից մի մեծ գունտ կարողացած լինի մի քաջ Հայու գործ կատարել : Հայն երբ ճակատամարտի մէջ է մտնում, կտրծես թէ գայլ կամ առիւծ է մտել ոչխարի հօտի մէջ՝ կամ մի հրդեհ չորացած անտառի մէջ, մանաւանդ Աարդանը, որոյ քալած տեղը մահ է թա-

գաւորում, նորա սուրը գերանդու նման զլուխներ է հնձում, աչքից ցորացած կրակն ահեղ բանակներ է վառում, ինչպէս վառեց և լափեց Սեբուխտի բանակն Աղուանից աշխարհումը, և հազիւ մի բօթաբեր ազատեցաւ նորա գերանդուց : այս պատմածներին ստուգութեանն ականատես վկայ եմ, վասն զի ես էի այն բօթաբերի պաշտօն կատարողը :

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ .

Այո՛, Հայոց քաջութիւնը շատ մեծ է, ես այդ քաջ գիտեմ գիտեմ նաև որ եթէ նորա միանան, Հայաստանը Պարսից գերեզմանատուն կդարձնեն, և մեր յաղթութեանց շատն Հայոց ձեռք և հնարագիտութեամբն է եղել մեր թշնամեաց դէմ, ինչպէս գրւած կայ մեր արքունի դիւանական արձանագրութեանց մէջ . բայց այս պատերազմը կրօնական է, Միհր Աստուած մեզ անշուշտ կօգնի . և Աստակ մարդպանը քակել է նոցա միութիւնը, մեր բանակն էլ լի է քաջ Հայերով :

Մ Ո Ւ Շ — Ն Ի Ս Ա Լ .

Տէր իմ, Աստակայ վերայ յոյս դնել չէ կարելի, նա քամու աղացք է, որ կողմից քամին փչէ, առաջատներն այն կողմն է դարձնում, նա միշտ կշօի ծանր կողմին է մտիկ տալիս, վասն զի նա եթէ իւր բուն ազգին և կրօնին հաւատարիմ չէ, մեր դէմն աւելի ևս, զուր է նորա երդման հաւատալ : նա հազար անգամ սուտ ու երդմազանց է եղել իւր կրօնակցաց և ազգակցաց մօտ, ինչպէս յայտնի է նորա գրածներէց : կատուն միայն իւր փորի համար է մտնէ բռնում, ոչ թէ իւր տիրոջ տան օգտին : Աերջապէս խոհեմութիւն չէ ազգուրացին վատահել, եթէ նա իւր արիւնակից, սննդակից, կրօնակից և ընկերակից մարդիկ զոհում է իւր օգտին, մեզ աւելի ևս պիտի զոհէ, նա մինչ ցարդ զրեթէ միշտ փնտսել է Արեաց Գրան . ես օձից այնքան երկիր չեմ կրում, որքան Աստակից, որոյ շողքորթ, երկճղի լիզուն և խաբերայ շարժմունքն ցոյց են տալիս իւր հոգու նենգութիւնը :

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ .

Այո՛, այդ ամենը ճշմարիտ է, Աստակը քամու աղացք է, բայց անիւները մեր ձեռին են, նա կշօի ծանր կողմին է յարում, բայց կշտը մեր ձեռին է, մեր նորա շահուց և նպատակի յարմար խստաճանկով միշտ մեր կողմն կպահենք . նորա թոյլ կողմերն արդէն լաւ ճանաչել եմք, կըխոստանամք նորան տալ Հայաստանի թագն ու գաւազանը, կխաբենք զինքն և գործ կածենք մեր կամաց համաձայն, եթէ յաղթենք, յաղթութեան պսակն մեզ կօնպահանայնենք, եթէ յաղթուենք, բոլոր փնտսի պատճառը նորան կներկայացնենք Արքայի առաջ, որ և արդէն իսկ կասկածում է նորա վերայ :

( Արքայն է Գրնէ )

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԱՌԱՋԻՆՔ ԵՒ ԱՐՏԱՇԻՐ.

ԱՐՏԱՇԻՐ.

Տէր իմ, Հայաստանի վերակացու Գեղարքունիքի սպասուսմէ ձեր հրամանին՝ ձեզ ներկայանալ.

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ.

Թող գայ թերևս մի կարևոր լուր ունի (Արտաշէր Կէ Կէնէ).

Մ Ո Ւ Շ — Ն Ի Ս Ս Լ.

Գեղարքունիքի գաղութային յայտնի ապացոյց է Հայոց ապստամբութեան, եթէ Հայեր չվճռէին պատերազմէլ, նա գուրս չէր գալ. Հայաստանից և գուցէ վատնից է խոյս տուել. (Գեղարքունի Կէ Կէնէ).

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԱՌԱՋԻՆՔ ԵՒ ԳԵՆՇԱՊՈՒՀ.

Գ Ե Ն Շ Ա Պ Ո Ւ Հ.

Ողջն զիցազունք.

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ.

Ողջ է ձեր գաղութային.

Մ Ո Ւ Շ — Ն Ի Ս Ս Լ.

Եւ ի՞նչ լուր Հայաստանից.

Գ Ե Ն Շ Ա Պ Ո Ւ Հ.

Տէր իմ, ըստ հրամանի Արեւաց Տեառն, ես Հայաստան մտած օրէքս սկսեցի սարսափելի հարկահանութիւն, տարիներով յառաջ մեռածներից իսկ գլխահարկ առի նոցա ժողովներից, եկեղեցականներից կրկնապատելին առի, շէն և անշէն տեղերից, եկեղեցեաց փրատակներից, վանքերից, մինչև անգամ գերեզմանատանց խաչաքարերից հարկ առի, բայց ինչքան նեղեցի, այնքան աւելի տարածեցաւ նոցա կրօնն և համարձակութիւն գաւաւ ինչքան տանջեցի և զանազան սուտ պատճառանօք մահացրի, աւելի հաստատուեցան իւրեանց հաւատքի մէջ. նոցա կրօնն միացել է իւրեանց օւղեղի, արեան և հոգւոյ հետ. պարգև կամ տուգանք, սէր կամ ատելութիւն, քաղցրութիւն կամ խստութիւն միևնոյն է նոցա մօտ, տգէտ պառաւելներն իսկ իւրեանց կրօնականներից աւելի պնտահատ են: Ահրջայէս Հայաստանի մէջ Մազդեզանց օրէնքի հաստատութիւն գտնելը անհնար է, թէև Աստուածներն անգամ մեզ օգնեն. ես բոլորովին թիրաշահատուս եմ, որովհետև փորձով տեսայ, մի տարւայ մէջ հաւաքածս հարկն հաստար է 10 կամ 20 տարւայ հարկին, որոյ մեծ մասն պարգև

և կոշտօք տուի զանազան անձանց՝ թողուլ իւրեանց կրօնն կամ աշխատակից լինել ինձ, բայց չյաջողեցայ նպատակիս հասանել, Արեւաց Տեառն կամքը լիովին կատարել, գուցէ այս պատերազմն էլ չկարենայ կատարել և զուր արիւն թափուի և ծախս լինի:

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ.

Դու չկարացիր գոնէ երկպառակութիւն ձգել Հայոց կրօնականաց, աշխարհականաց, և նոցա նախարարաց մէջ, ի՞նչի պաշտօնակալներն չփոխեցիր, անարժաններն պաշտօնի չկացուցիր, որով կարող լինէիր գրգռուութիւն պատճառել:

Գ Ե Ն Շ Ա Պ Ո Ւ Հ.

Տէր իմ, ես ամենայն տան մէջ խռովութեան որոմներ ցանկի առատ առատ, այնպէս որ հայր և որդին միմեանց ոխերիմ թշնամի արի, բայց երբ գործը կրօնի վերաբերի, իսկոյն մոռանում են իւրեանց թշնամութիւնն, անձնական ոխն և վտէժխնդրութիւնն, միանում են իբրև մի սիրտ և մի հոգի, կրօնը նոքա Հայ եկեղեցւոյ ամբողջութեան, ինքնուրոյնութեան, ազգութեան, լեզուի և հայրենեաց միակ նեցուկ և պաշտպան են ընդունում. միայն Վասակ Մարգպան և իւր հետ մի քանի անձինք մեր կողմն են այժմ, բայց նոքա ևս կասկածելի անձինք են, նոցա վերայ յոյս դնել կարելի չէ, նոքա համարումն, յարգ կամ բարոյական ազդեցութիւն չունին իւրեանց ազգի մօտ, վասն զի բոլորն ևս ընդունում են նորանց իբրև ստախօս, խաբբայ, անխիղճ և անկրօն, վասն զի նոքա թէ անբարոյական են իւրեանց կրօնի մէջ և թէ երկու կողմին էլ մեծ փնտաներ են տուել, երբեմն մեզ հետ միացել են, եկեղեցի են քանդել, Ատրուշանի հիմնարկութիւն են արել, և երբեմն ջարդել են մոզերին իւրեանց ազգի հետ միացած, միշտ կշռի ծանր կողմին են մտիկ տուել, նոցա հոգւոյ և սրտի մէջ ոչ Մազդեզանց և ոչ Քրիստոնէական կրօնի նշոյլ չկայ, նոցա մօտ ամենայն ինչ ունայն է, իւրեանք անխիղճ և անկրօն գորով, նոցա պաշտածն է միմիայն իւրեանց անձնական շահը, զոր ձեռք բերելուց յետոյ, կրկին մոռանում են պարգևատուն և բարեբարն:

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ.

Նոցա անկրօնութիւնը, անխիղճութիւնը կամ անբարոյականութիւնն ու ստախօսութիւնը մեզ փոյթ չէ, մինչդեռ շահամոլ անձինք են Վասակ և և իւրայինք, մէք էլ շարունակ կը խոստանամք նոցա աւելի մեծ պատիւ, փառք և իշխանութիւն, մինչ յաղթենք, յետ յաղթութեան կը պատժենք նորանց իբրև երկու կողմի փնտսակար յանցաւորներ:

Մ Ո Ւ Շ — Ն Ի Ս Ս Լ.

Այժմ ո՞ր է Վասակ,

ԳԵՆՇԱՊՈՒՆՆԵՐ

Նա այսօր իւր համախոհների հետ դէպի բանակն եկաւ ձեզ ներկայա- նալու: Ինձ ուղեկից էր: արքունի գանձն անփնառ գանձարան հասցնելու:

ՄՈՒՇ—ՆԻՍԱՆ

Եւ ո՞ գիտէ՛ գուցէ քեզ ընկերացել էր մի հնարքով արքունի հարկն յափշտակելու: բայց չէ յաջողել, կամ եկել է մեզ խաբել, տանել Հա- յաստանի խորերն և կոտորել տալ: նորա միտքն ու նպատակն յժուար է խմանալ, նա օրն եօթն գոյնի է փոխուում:

ԳԵՆՇԱՊՈՒՆՆԵՐ

Նա այժմ մեր կողմն է, վասն զի էլ վստահութիւն չունի իւր ազ- գի մէջ մանկու: մի քանի անգամ բռնուել է, կամեցել են քարկոծել, բայց աղաչելով և սուս երգմամբ պրծել է, քաջ գիտէ որ այլ ևս չէ կարող խաբել: այժմ մեր կողմի կշռի թաթը ծանր է երևում նորան: նա մեծ յոյս ունի, որ պիտի յաղթենք և ինքը թագաւոր լինի, և այն նպատակաւ միայն իւր երկու որդիքը պատանդ է թողել մեզ մօտ Արեաց Գունն: բայց ահա եկաւ նա, ես գնում մեմ Արքայի մօտ հարկն յանձնել գանձարանին: (Էլ զի՛նք, վասն զի զի՛նք քան զի՛նք):

ՏԵՍԱՐԱՆ Զ

ԱՌԱՔԻՆԵՔ ԵՒ ՎԱՍԱԿ

Վ Ա Ս Ա Կ

Ողջոյն ձեզ զիցազունք Արեաց:

ՄԻՆՐ ՄՈՒՇ—ՆԻՍԱՆ

Ողջ է ձեր գալուստը:

Վ Ա Ս Ա Կ

Զօրութեամբ և յաջողութեամբ Միհր Աստուծոյ և Արեգական ողջ է և ըստ ամենայնի յաջողակ:

ՄԻՆՐ ՆԵՐՍԷՆ

Թեպէտ նամակներովդ բաւական տեղեկութիւններ առել եմ Հայոց վե- րայ լսել եմ քս քաջագործութիւնները Գեներալու հից, բայց կամենու- մեմ կրկին լսել բոլոր հանգամանքն:

Վ Ա Ս Ա Կ

Քաջագուն տէր, ինչպէս կանխաւ յայտնել իմ Արքային և ձեզ, Հայեր արգէն զղուած Քրիստոնէական կրօնից, յօժար և մտադիր էին ընդունել Մազդեզանց օրէնքը, բայց միայն մի քանի կրօնապետներ, ինչպէս են Յով-

սէփ Կաթողիկոս, Սահակ եպիսկոպոս, Ղեկնդ երէց և նոցա համափա- մի քանի իշխանք, Աարգան սպարապետ իւր եղբայրներով և ազգակից- ներով: Արշաւիր Արշարունին, Խորէն Խորխոռունին և ըն իւրեանց ընտանեօք և փոքրիկ գնտերովք արգել օ եղան բոլոր Հայոց կրօնա- փոխութեան և խիստ յանդգնութեամբ պատասխանեցին Արքայի հրօ- վարտակին և ձեր նամակին: ես թէև շատ ընդդմացայ, բայց չյաջողեցայ համոզել, ճարահատեալ միացայ նոցա հետ ստորակնքեցի և երգուեցի պաշտպանել Քրիստոնէութիւն, նոցա հետ Արքայի մօտ դիմեցինք, մեր- ժեցինք նորա հրամանը բանտարկեցանք: այս ամէնը յայտնի է ձեր քա- ջութեան: Արքայի պալատական ծածուկ Քրիստոնէայ ներքինին խրատեց մեզ ուս երեսս կատարել Արքայի կամքը: դառնալ Հայաստան, ապստամ- բել և պաշտպանել մեր կրօնը, նորա խրատով մենք խաբեցինք Արքային: նայն մէջոցին ես թէև կամեցայ գաղտնիքն յայտնել ձեզ, բայց շուտով մոռաց հետ ուղեւորելով դէպի Հայաստան, միջոց չունեցայ ընկերներիցս ջոկնուել և յայտնել, և յետոյ թեպէտ գրեցի, բայց նամակս բռնելով Աարգան չկարացի նպատակիս հասանել և աւելի կասկածաւոր եղայ նոցա մօտ:

ՄՈՒՇ—ՆԻՍԱՆ

Եթէ գաղտնիքն յայտնէիր Արքային, իսկոյն Հայոց վերայ թագաւոր պսակուելով Հայաստան պիտի վերադառնայիր, իսկ ընկերակիցներդ Սա- գաստան կամ Անյուշ բերդ պիտի գնային անդարձ և դու բնաւ դժուարու- թիւն պիտի չկրէիր հանգիստ և ապահով թագաւորելու:

Վ Ա Ս Ա Կ

Այն անյաջողութիւն, որ ինձ պատահեցաւ, թերևս Միհր Աստուծոյ պատիժն է, որում երբեմն անգիտութեամբ չէի պաշտում ըստ արժան- յոյն բայց այժմ յուսում, որ հաշտ է ինձ հետ Միհր Աստուած և պիտի հասնեմ նպատակիս:

ՄՈՒՇ—ՆԻՍԱՆ

Անշուշտ կը յաջողի քեզ միայն այն ժամանակը, երբ կարողանաս քա- կել Հայոց միութիւնը, և առանց պատերազմի և արիւնհեղութեան յաղ- թել, և յառաջ տանել Աստուածոց և Արքայի կամքն:

Վ Ա Ս Ա Կ

Իմ բոլոր աշխատութիւնս և ջանքս է չէն երկրի վերայ թագաւորել, ոչ թէ աւերակաց:

ՄԻՆՐ ՆԵՐՍԷՆ

Բայց դու ինչի՞ գոնէ մոռաց չյայտնեցիր ընկերակցացդ գաղտնի նպա- տակը:

Վ. Ս. Ս. Ս. Կ.

Տէր իմ, ես յայտնեցի Մոզպետին, նա շատ զգուշացաւ, բայց ապրտամբ Վարդան զաղանի գրել էր Յովսէփ Կաթողիկոսին իւր զիտաւորութիւնը, նա գրգռելով ժողովուրդը, Ղէնդ երիցու առաջնորդութեամբ արք և կանայք մեր բանակի դէմ ելան Անդղ գեղի մօտ, կոտորեցին մոգերին և զիս կապած ներկայացրին Յովսէփին, և մինչ մտադիր էին քարկոծել զիս, ես հազիւ յաջողեցայ երդամբ խաբել, նորանով կրկին գրաւեցի նախարարաց վստահութիւնը և զօրքն երեք մասի բաժանելով, մի մասն Վարդանայ հետ զիմեց Աղուանից օգնութեան, Սիբուխտի դէմ, երկրորդ զօրաբաժինն յանձնեցի Ներշապուհին պահպանեցի սահմանազուլան, իսկ երրորդ զօրաբաժինն իմ մօտ պահեցի բոլոր համաժողովուրդս, յաջողեցայ շատ տեղեր Ատրուշաններ շինել, եկեղեցիք կործանել, ամուր բերդերն գրաւել իմ իշխանութեան տակ, Յունաց բաժին Հայաստանի վերակացու Վասակայ ձեռօք քակեցի Յունական Հայոց միաբանութիւնը և չթողի օգնել Արեաց բաժին Հայաստանի Հայոց, գրելով թէ «Արքայն կրօնի կատարեալ ազատութիւն է տուել, բայց Վարդան ապրտամբել է և կամի պատերազմել և թագաւորել», նոյն միջոցին յետ գարձաւ Վարդան Աղուանից աշխարհից, ես օգնութիւն խնդրեցի Արքայից, բայց զօրաց զալն յետաձգեցաւ, ես ճարահատեալ թողի ամենայն ինչ և փախայ:

Մ Ո Ւ Շ — Ն Ի Ս Ս Լ:

Ուրեմն Հայեր միաբանած պատրաստ են պատերազմելու:

Վ. Ս. Ս. Ս. Կ.

Այո՛, Վարդան իւր համախոհներին հետ մահ աչք առած պատրաստուել է պատերազմել Արեաց ահնդ բանակի դէմ, ունի վաթսուոն հազարի շափ խառնիճաղանճ բազմութիւն արանց և կանանց, բայց նոքա Արեաց քաջերու սրերն լուանալու շատ քիչ են:

Մ Ո Ւ Շ — Ն Ի Ս Ս Լ:

Մեր շպետքէ վստահիւք մեր բազմութեան վերայ, մեր զազան փղերի կատաղութեան վերայ, Վարդանայ քաջութիւնն ու ազգամոգիտութիւնը ծաղրոււմ է բոլորին, քակոււմ է Մատեան գունդը, մանաւանդ եթէ 60 հազարն ևս ինքնայօժար են պատերազմոււմ, դու քո նպատակին չես կարող հասանել պատերազմելով, կը զրկուես գահից և թաղից, և մէք ամենքս կամ պատերազմի մէջ կընկնենք ի զուր, կամ Արքայի առաջ ամօթաճար և պատժապարտ կը լինինք. նոցա միութիւնը քանդելու հնար գտիր:

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Ե Հ:

Միթէ՞ Վասակայ հնարագիտութիւնը պակաս է Վարդանից, նա թէ իւր քաջութեան և սրին է վստահացել, իսկ Վասակայ խելքն ու իմաստութիւնը կարող է բթացնել նորա սուրբը, թող թէ մի կատաղի փիղ կարող է լեղապատառ անել Վարդանայ գնտի խառնիճաղանճ բազմութիւնն, ոտնակոխ անել և շփոթել ամբողջ բանակը:

Վեհազուն տեւորք, ես բոլորովին վստահ եմ յաղթութեան, մինչդեռ մեզ օգնական ունինք Միհր, Արմիզդ և Արեգակն, իսկ նա զրել է իւր յոյսը մի աղքատ հիւսան որդու վերայ, որ չկարաց ազատել զինքն տկար Հրէից ձեռքից և մեռաւ խաչի վերայ. զայս զիտէ նաև ինքն Վարդանը, բայց միայն յամառ կամակորութիւնն է ստիպել զինքն ապստամբել:

Վ. Ս. Ս. Ս. Կ.

Վեհազուն տեւորք, ես բոլորովին վստահ եմ յաղթութեան, մինչդեռ մեզ օգնական ունինք Միհր, Արմիզդ և Արեգակն, իսկ նա զրել է իւր յոյսը մի աղքատ հիւսան որդու վերայ, որ չկարաց ազատել զինքն տկար Հրէից ձեռքից և մեռաւ խաչի վերայ. զայս զիտէ նաև ինքն Վարդանը, բայց միայն յամառ կամակորութիւնն է ստիպել զինքն ապստամբել:

Մ Ո Ւ Շ — Ն Ի Ս Ս Լ:

Բայց աւելի լաւ չէ՞ առանց արիւնհեղութեան յաղթելն:

Վ. Ս. Ս. Ս. Կ.

Եւ զուցէ զեռ ճակատամարտ չսկսած՝ ցրուի Վարդանայ բանակը, կամ անձնատուր լինի, վասն զի ես ինձ համաժողովուրդն ունիմ նորա բանակի մէջ, որք կարող են ամենայն տեսակ շփոթութիւն գցել, յաղթուելու սուտ փողեր հնչեցնել և կամ Վարդանին վստանգի մէջ գցելով սպանել ու ճակատամարտը զազարեցնել և խաղաղութիւն խնդրել, Արեաց արքայի ցանկացած բոլոր պայմաններն յանձն առնելով:

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Ե Հ:

Մուշ—Նիտալաւուրտ, դու քաջ ծանօթութիւն չունիս Վասակայ վերայ, գորա հնարագիտութիւնը հուսասար է Աստուածոց իմաստութեան. դու բոլորովին հետեւիր Վասակայ խորհրդին. ես ամենահարկաւոր գործի համար ստիպուած եմ գնալ Արքայի մօտ, ամբողջ բանակը ձեր երկուքի խոհեմութեանն եմ յանձնոււմ: Քաջ Վասակ, դու բոլորովին վստահ եղիր, որ քիչ միջոցի մէջ, իմ միջնորդութեամբ կստանաս թագ և գաւազան, դու այսօրից իրաւունք ունիս իբրև թագաւոր գործել, քեզ պաշտօնակալներ, նախարարներ կարգել. նոր նախարարաց տոհմ ջոկիր քո համախոհներից, հներն իսպառ զրկիր իրաւունքից, այսուհետև որդոց որդի պիտի թագաւորես Հայոց, միայն թէ Արեաց Գրան հնազանդ լինիս, Ատրուշանաց պայծառութեանը հոգ տանես:

Վ. Ս. Ս. Ս. Կ.

Ա՛հ, Տէր իմ, այդ խոստումնք միայն կարող է փրկել Հայաստան թէ հին նախարարաց բանութիւնից և թէ մուլար ազանդից. ես այսօր ձեր հրամանաւ կը գրեմ Հայաստան իմ համախոհ անձանց իբրև թագաւոր, կընտրեմ ինձ սպարապետ, նախարարներ, վերակացու կուսակալներ զանազան գաւառաց, կըտամ իրաւունք յափշտակել հին նախարարաց սերունդոց ինչքն ու ստացածքը, մի ահեղ խռովութեան փութորիկ պիտի գցեմ Հայաստանի մէջ, մինչ Վարդան և իւրայինք մեզայ գոչին և հնա-

զանգուժիւն ուխտելով զիմեն Արեաց Գուռը օգնութիւն և միջնորդութիւն խնդրել, իւրեանց զէմ ապստամբներին ջնջել:

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ:

Ունի՞ս քիչ հետ համախոհ և վստահելի անձինք:

Վ Ա Ս Ա Կ:

Այո՛, տէր իմ, կրօնականներից ունիմ երկու քահանայ, Պետրոս և Զանգակ, իսկ աշխատական իշխաններից ունիմ Արտակ իշխան Ռշտունի, Գատիշոյ իշխան Խորխոռունի, Գիտիշխան Վահակունի, Տիրոց իշխան Բագրատունի, Մանէճ իշխան Ապահունի, Վարազշապուհ իշխան Պալունի, և ինչ, և ինչ, իւրեանց գնտերով և ընտանեօք, նոքա շատ յաջողակ են թէ ժողովուրդը գրգռելու ընդդէմ Վարդանայ, և թէ կրօնականաց և աշխարհականաց դասերը միմեանց ատելի անելու, մանաւանդ Պետրոս և Զանգակ քահանայք կարող են աջ ձեռն ձախ ձեռին թշնամացնելու, նոքա այժմ ինձ հետ եկել են ձեր քաջութեան ներկայանալու:

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ:

Ո՛ւր են այն քաջերն, որ նոցա վարձ խոստանամ, որպէս զի քաջապետին քաջագործութեան մէջ, թող ներս գան:

Վ Ա Ս Ա Կ:

Այժմ այս բոլորին կրննրկայացնեմ ձեր քաջութեան, (չէ Կէն):

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ:

Ես ինձ վերայ այնքան վստահ չեմ, որքան Վասակայ վերայ, Մանչկան նիսալաւուրտ, այժմ վստահ ես յաղթութեան:

Մ Ո Ւ Շ — Ն Ի Ս Ա Կ:

Տէր իմ, Վասակայ անխիղճ բնաւորութիւնը, խորամանկութիւնը, փառասիրութիւնը, հակասական և պատ ի պատ խօսքերն ինձ աւելի վհատեցնում են քան թէ խրախուսում:

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ:

Քայց դու աշխատիր ժամանակից օգուտ քաղել, գուցէ յաջողես նորա ձեռօք ցրուել Հայոց միութիւնը և չթողուլ պատերազմել մեր դէմ:

Մ Ո Ւ Շ — Ն Ի Ս Ա Կ:

Ես պիտի աշխատեմ որ և իցէ հնարքով Վասակ մեզ բարեկամ պահել, եթէ օգուտ էլ չգայ մեզ, դէթ չվնասէ, չմիանայ իւր ազգի հետ:

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ:

Ուրեմն դու շարժուիր ըստ պահանջման ժամանակին, լրտեսիր նորա ընթացքն, արդէն Արքայն երդուել է Արեգական վերայ, եթէ նա յաղթէ ևս, պիտի պատժուի անշուշտ, մենք մեր օգտի համար ստախօսին սուտ խոս-

տումով կը խաբենք, մեր շահը և քաղաքավարութիւնն էլ այնպէս է պահանջում:

(Վասակ, Պետրոս և Զանգակ չէ Կրնէ):

ՏԵՍԱՐԱՆ Ե:

ԱՌԱՋԻՆՔ, ՎԱՍԱԿ, ԶԱՆԳԱԿ, ԵՒ ՊԵՏՐՈՍ

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ:

Բարի է ձեր գալուստը պատական Հայեր, Արեաց արքայի և մեր յատուկ սիրոյ արժանի քաջեր, վստահ եղիք, որ ձեր աշխատութիւնն անվարձ չի մնում, դուք արժանի էք ամենայն պատուոյ և փառաց, զձեզ պիտի կարգեմ ընդհանուր Հայաստանի մոզպետ, Հայ քահանայից ինչք և ստացուածք ձեզ պիտի տամ որդոց որդի, դուք այսօրից սկսած՝ մոզպետի իրաւունք ունիք, կարող էք Հայաստանի մէջ ձեզ ստորագաս պաշտօնակալներ ընտրել ձեր համախոհներից:

Զ Ա Ն Գ Ա Կ:

Տէր իմ, մեք վարձ ստանալու յուսով չեմք աշխատում, բաւական է, որ Հայաստանից վերնայ Քրիստոնէութեան ծանր լուծը զոր բորոտ Աբգար և զիւր հար Տրդատ թագաւորներ բուռութեամբ զրին Հայոց վզի վերայ, որի տակ ճնշուել եմք իսպառ:

Պ Ե Տ Ր Ո Ս:

Այո՛, Քրիստոնէութեան ծանր լուծը մեզ ճնշել է բոլորովին, Հայեր երբ Քրիստոնէական կրօնը չէին ստացել, բոլոր ազգաց յաղթող էին, իսկ երբ ընկան այն մոլար աղանդի մէջ, որ ըստ օրէ տկարացան, սակաւացան և աշխարհի ատելի գարձան, եթէ մազդեզանց օրէնքին հետեւին, կրկին տէր կը լինին աշխարհի:

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ:

Ահա ճշմարիտ Հայ և հայութեան օգուտ պաշտպանող քաջ ճանաչել էք, որ Հայոց տկարութեան և օր ըստ օրէ նուազելու պատճառն եղել է իւր կրօնը, հրամայելով փախչել պարարտ կերակրից և բազմակնութիւնից, թէև անժառանգ մեայ աշխարհի վերայ կնոջ ավուրթեան պանծառաւ:

Զ Ա Ն Գ Ա Կ:

Արդարեւ այդպէս է Տէր իմ, ես մի հիւանդոտ կին ունիմ, որ ամուլ է, դորա կիներ էլ վաղուց մեռած է, մեք անժառանգ և անյիշատակ պիտի մնանք, եթէ մոզպետն ներող օրէնքին չգիմենք, որը ազգի աճելութեան և ընտանեկան սիրոյ և միութեան պատճառ է, հրամայելով կին առնել մայրը քոյրերն ու միւս ազգակիցները: մինչդեռ ընդ հակառակն Քրիստոնէութիւնը արգելում է մերձաւորաց խնամութիւն, և օտար անձանց թի հետ միայն աղ-

ջիկ տալ առնել կանոնածէ, և որքան միմեանց հակառակ, ատող և անյարմար լինեն, պէտք է միմեանց հետ կենակցին, ապա թէ ոչ, անկին մնան. մանաւանդ հինգ տարի յառաջ Շահապիւանու յիմար ժողովի կարգադրութիւնը սարսափելի տուգանքներ սահմանեց փոքրիկ յանցաւորին, և Քրիստոնէական կրօնն իսպառ զղուելի արաց Հայ ժողովրդեան:

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ:

Ձեզ նման քաջերն իրաւունք ունին հարիւրաւոր կանայք և հարձեր ունենալ, ոչ թէ ամենայն վայելչութիւնից զրկուել. ես հրամայում եմ, որ ձեր մոլար քահանայից կանայք և աղջկուկը և հարսուկը ձեզ կին և հարձ առնեք, որքան և կամիք, դուք մի մի փառաւոր պալատներ պիտի ունենաք կանանոց. յետ յաղթութեան ձեզ կը տամ Վաղարշապատու և Արտաշատու մայր ատրուշանաց ատրուշանապետութիւնը հանդերձ մոգպետութեամբ. այժմ գնացէք լրտեսել Հայոց բանակը, գործեցէք քաջ Վասակայ խորհրդով, որ այսօր ստացաւ Հայոց թագաւորութեան իշխանութիւնը. ես կը գնամ Արքայի մօտ, քիչ օրից յետոյ կը բերեմ նորա համար թագ և գաւազան. դնացէք աւետել Հայոց և աշխատեցէք ցրուել ապրստամբաց միութիւնը, որ կարող լինիք ձեր նպատակին հասանել. Վարող էք գնալ, աստուածք ձեզ հետ:

Պ Ե Տ Ր Ո Ս Ե Ի Զ Ս Ն Գ Ս Կ:

Թող Յովսէփ կաթուղիկոս իւր տուգանաց 20 կանոններն շարակելով տանէ Յունաց ծախելու, մեք ազատուեցանք նորա ծանրութիւնից, Աստուածք ձեզ օգնական զիւցազուկը Արեաց: (Իւ Վիւն):

Մ Ո Ի Շ - Ն Ի Ս Ս Լ:

(Ինչի) Սորա էլ կնամուլութեան ախտով կուրացած են, սոցա վերայ էլ յոյս գնել խոհեմութիւն չէ:

Վ Ս Ս Ս Կ:

Հայ ժողովուրդը իբրև պատգամ Աստուծոյ է ընդունում սոցա քարոզները, վասն զի Հայը սովորել է քահանայից սուտն իբրև ճշմարիտ ընդունել:

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ:

Ես ահա կը գնամ Արքայի մօտ ձեզ փառաց և յաղթութեան պսակ պատրաստել, և եթէ հարկը պահանջէ, ձեզ օգնութեան համար գուժտեր ուղարկել, մնայք բարեաւ:

Վ Ս Ս Ս Կ Ե Ի Մ Ո Ի Շ - Ն Ի Ս Ս Լ:

Գնայք բարեաւ, Միհր ու Որմիզ ձեզ ընկեր, հրամայեցէք մոգպետին զոհեր մատուցանել և յաջողութիւն խնդրել:

Մ Ի Հ Ր Ն Ե Ր Ս Է Հ:

Քաջութիւնն ու խոհեմութիւնը ձեռքից չթողուք: (Իւ Վիւն):

Մ Ո Ի Շ - Ն Ի Ս Ս Լ:

Ուրեմն և մեք հրաման տամք զօրաց պատրաստուել յառաջ խաղալ դէպի Արտազու գաշտը:

Վ Ս Ս Ս Կ:

Այո, յառաջ խաղանք, բռնեք ամրութիւններն ու կերձերը, բայց ես յարմարեմ համարում ընդհանուր զօրահանդէս կաղմել, պատուէր տալ և քաջալերել:

Մ Ո Ի Շ - Ն Ի Ս Ս Լ:

Շատ բարի, (Դունից Գորգի Գրիգորի, Բարդուղիմէոս Գորգի) Ամենայն զօրայեւոր հաւաքուեն վրանի առաջ դէպ ի աջ: (Փող իւ հնար):

Վ Ս Ս Ս Կ:

(Դունից Գորգի Գրիգորի, Բարդուղիմէոս Գորգի) Հայկական դուռնն ամբողջ հանդերձ զօրայեւորք հաւաքուելի վրանի ձախ կողմը: (Փող իւ հնար և Գրիգոր Գրիգորի իւ լուր):

Տ Ե Ս Ս Ր Ս Ն Զ:

Մ Ո Ի Շ - Ն Ի Ս Ս Լ Ե Ի Վ Ա Ս Ս Կ:

Մ Ո Ի Շ - Ն Ի Ս Ս Լ:

(Երեւ Գրիգորի Գրիգորի Գրիգորի) Սիրելի քաջազունք Արեաց գնդի, դուք ամէնքդ քաջ գիտէք այստամբ Վարդանայ քաջութիւնը, դուք ևս կրկին զօրութիւն գգեցէք. յիշեցէք Արքայի հրամանն, ընտրեցէք քաջութեամբ մահն, քան վատութեամբ կեանքը. Հայոց գնդի և երկրի կողմ պուտը ձեզ սեպհականութիւն է տուել Արքայն, միայն թէ աշխատեցէք Մազզեղանց օրէնքն Հայաստանի կեդրոնի մէջ հաստատել ձեր քաջութեամբ. ձեր պատերազմը միայն կանոնաւոր զօրաց հետ չէ, այլ և խառնիճաղանճ ամբոխի հետ, ուստի անխնայ կոտորեցէք առանց խտրութիւն անելու աստիճանի և հասակի արքայ, կանայք, ծերք, մանկուկը և հարսուկը, այն զօրականը, որ թիկունքից վէրք ստանայ, փախստի նշան է, նա կը պատժուի անշուշտ, և նորա ընտանիքը արքայի կը մասնուի: Պատրաստ եղէք յառաջ խաղալու դէպի Հայաստանի սահման, Արտազու գաշտ, Տղմուտ գետի ափը, բռնել ամրութիւնները, միշտ յարձակողական զրից մէջ լինի բանակը, դարանամուտներն ու լրտեսներն անգործ չմնան:

Զ Օ Ր Ս Պ Ե Տ Ք:

Մեր կեանք և մահ արքային ենք պարտական:

Մ Ո Ւ Շ - Ն Ի Ս Ա Լ .

Ի բարանչիւր փղի շուրջ Յ հազար սպանակն պատրաստուի սոքա բանակի յառաջ պատրաստ լինին կատարարար արշաւել Հայոց բանակի վերայ, Մատնան անմահ գունդն իմ շուրջը հաւաքուի, Անարեաց գնտերն իմ թղ կողմն գումարուին, իսկ Վատակայ Հայկական գունդը ձախ կողմն փանգեի ճակատամարտի ժամանակ, ձեր լուրրի ուշադրութիւնը և ջանքը տւղլալի Վարդանայ զօրաբաժնի վրայ ուղղեցէք:

Չ Օ Ր Ա Պ Ե Տ Ք .

Սամք քաջիդ մեզ տուածնորդ թող լինի պատրաստ եմք և կազմ:

Վ Ա Ս Ա Կ .

(Դեղ է յո՛ւ իոգի քո՛ւն քե՛տեւ ի՛նչ քո՛ն յո՛ւն) Սիրելի քաջազունք Հայոց, քաջացէք յաղթութեան պատեն ընդունել, Հայ անուն և արիւն պատեցեք քաջութեամբ, յիշեցէք, որ ձեր ախոյեանը Հայեր են, ձեզ նման քաջեր են, ապտամբներ են. ապտամբ Հայը հրաշքնիր է գործում, դուք քաջացէք ինզզել հրաշքը խանձարուրի մէջ, ջնջելով ապստամբութիւնը, ձեր քաջութեամբ միայն պիտի վերանորոգի Հայոց թագաւորութիւնն, Արեաց արքայի կամքն է, որ Հայոց թագաւորութիւնը իբրև պատուար կանգնի Յունաց դէմ, Հայաստանի Յունական մասն ևս յետ պիտի պահանջուի և միանայ մեր մասի հետ. Այս պատերազմը կրօնական պատերազմ չէ, Յազկերտ արքայն արդէն կրօնական ազատութիւն տուել է, ո՛վ ինչ կամի, այն պաշտի, Վարդան ապստամբել է Արքայից, կաշառուելով Յունաց կայսերից, ցանկանում է իսկ Հայաստանի արեւելեան մասն և յանձնել Յունաց, ինքն փառք և պատիւ ստանայ, Հայերին սարուկ անէ նենդ Յունաց. Ես Հայկական արիւն չէ կրում իւր երակաց մէջ, դաւաճան է Հայոց, դուք աշխատեցէք ողջ բռնել Վարդանին և նորա կշռով ոսկի տանալ Արքայից, կամ սպանել և յաղթող հանդիսանալ, Երբ Վարդան և իւր համախոհ նախարարներն յաղթուին, դուք կստանայք տոհմական նախարարութիւն, հին նախարարաց տոհմն պիտի ջնջուի, եթէ մեզ հետ միացած չեն. Այսօր ես հանդիսաւոր կերպով կերդնում ամենայն ազգաց կրօնների և պաշտած աստուծոց վերայ, իմ քաջութեան և պատուի վերայ, որ ձեզ բոլորիդ պիտի նշանակեմ առատ պարգև և նախարար, զօրապետ ազատ իջևան, երբ յաջողեմ թագաւոր պսակուել Հայաստանի, վասն զի այսօր ես ստացայ թագաւորելու իրաւունք և Միհրնբրսէհ գնաց Արքայից բերել ինձ թագ և գաւազան. ուրեմն քաջացէք յաղթել ապստամբաց, ճակատամարտի ժամանակը հաւաքուեցեք իմ շուրջս, ուղիղ գիմել Վարդանայ զօրաբաժնի վերայ:

Ո Ւ Ր Ա Յ Ե Ա Լ Չ Օ Ր Ք Հ Ա Յ Ո Յ

Կեցցէ նորապսակ արքայն Հայոց Վասակ:

Վ Ա Ս Ա Կ Ե Ի Մ Ո Ւ Շ - Ն Ի Ս Ա Լ .

Օ՛ն յառաջ, հնչեցնեն փողք արշաւելոյ, (անցնուին էրէւել)

Ա. Բրթուրբէան, էրէ:

(Վարադայրը կնջէ)

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ո Ի Թ Ի Ի Ն Գ .

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա .

Վ Ա Ր Գ Ե Ն, Խ Ո Ր Է Ն, Գ Ա Ր Ե Գ Ի Ն, Հ Մ Ա Յ Ե Ա Ն, Տ Ի Ր Ո Յ, Ե Ի Գ Ա Տ Ի Հ Ո Յ,

Վ Ա Ր Գ Ա Ն .

Պատուական Տեաւրք, քաջ նիզակակիցք իմ, մեք Արեաց յուռը գծալով մեր կրօնի և ազգի պաշտպանութեան նպատակաւ յանձն առինք առ երեսրս պաշտել անշունչ արեգակն ու կրակը, որպէս զի կրկին մեր Հայրենիք վերագառնալով միանայինք և դիմադրելով պաշտպանէինք մեր եկեղեցին և ազգը Յազկերտի յարձակման դէմ, և միանգամայն սրբէինք մեր ուրացութեան կեղտը, Երկինք երկնաւորներով և երկիր երկրաւորներով սուգ առին մեր ամբարշտութեան համար և նոյն իսկ մեր Հարք, եղբարք, որդիք և կանայք զինեցան մեր դէմ, առանց իմանալու մեր սրտի ծածուկը, որ միայն ծածկագիտին էր յայտնի. մեք յաջողեցանք կոտորել մոգերին, և միանգամայն ազգուրացնելին, և օգնել Ազուանից, Ահա այժմ ժամանակն է Յազկերտի բուռն յարձակման դէմ զնուելու, որ ահագին բազմութեամբ դիմում է Հայաստանի վերայ Մուշկան Նիսալաւորտի առաջնորդութեամբ, բառնալ մեր Քրիստոնէական սուրբ կրօնն, լեզուն և դպրութիւնը, ջլտալով ազգութեան ոյժն ու պահապան ծառն, որոյ հովանեաց ներքոյ սնունդ է առնում Հայութիւն. Եթէ մեք չմիանանք պաշտպանել մեր ազգն և Հայրենիք, թէ ուխտազանց պիտի լինիմք մեր սոսկալի երդման և թէ ապագայ սերնդոց նզովից և նախատանաց պիտի եմթարկուի մեր յիշատակը:

Գ Ա Ր Ե Գ Ի Ն .

Տէր սպարապետ, մեք արդէն քաջ համոզուել ենք, որ մեր ազգութիւնը վերջին ձգնաժամի մէջ է այժմ, մահու և կենաց խնդիր է մեր այսօրեայ խորհրդի նիւթը, կրօնի պատերազմը դիմակ է Յազկերտի երեսի վերայ և պատրուակ, նորա բուն նպատակն է Հայ ազգութիւնը բառնալ աշխարհի երեսից, թէ չէ Հայեր՝ դժոխք պիտի գնան կամ արքայութիւն, նորա քնչ հոգն է. նա իւր ազգի ապագայն հիւստեսելով վտանգ է գուշակում և աշխատում է բառնալ վտանգն, ամենայն ազգ և ազինք իւր ազգի հետ ի մի ձուլելով՝ ստուարացնել և զօրացնել, բայց քաջ ճանաչում է, որ այդ լինում է միայն կրօնի միութեամբ, որը ազգերը միութեան մէջ է պահում և միակ նեցուկ և կապ է ազգութեան:

Խ Ո Ր Ի Ն .

Մեր անմիաբանութիւնը այս ճգնաժամին հասցրեց մեր ազգն ու եկեղեցին չլսելով մեր հովիւ և Հայր Սահակ Հայրապետի խրատուցը ընդունելով Պարսից առողջ գազանը մեր հիւանդ ոչխարի փոխարէն, մեր մեր նախորդաց ազգակործան սխալմունքն ուրիշ բանով չեմք կարող ուղղել, բայց միայն մեր միութեամբ, որից ամէն յաջողութիւն կարելի է սպասել, վասն զի երբ յաղթուել է Հայը մի օտար ազգից, պատճառը միայն ներքին խռովութիւնն ու անմիաբանութիւնն է եղել՝ և կամ օտարի առաջնորդողն եղել է մի մատնիչ և ազգուրաց Հայ, այս ցաւալի ճշմարտութիւնը քաջ զիտելով օտարներն, աշխատում են նախ բաժանել մեզ զանազան կուսակցութեան) տկարացնել և ըստ այնմ յաղթել մեզ .

Հ Մ Ա Յ Ե Ա Կ .

Տե՛ղբ իմ, ևս հաւաստի տեղեկութիւն եմ ստացել, որ Յազկերտ խիստ վախճում է մեր միութիւնից, թէ և անթիւ զօրք է ուղարկել մեր վերայ, բայց աշխատում է, որ և իցէ եղանակաւ առանց պատերազմի և արիւնհեղութեան յառաջ տանել իւր նպատակը. թէ և սարսափելի թշնամի է Ասսակին, բայց Միհրանբէկի խորամանկութիւնը աշխատում է որչափ կարելի է գաղտնի պահել այս մինչ հասնի իւր նպատակին. որ և խոստացել է Ասսակին Հայաստանի թագն ու գաւազանը, որ կարենայ համոզել մեզ չպատերազմել, որպէս զի նոյն ահեղ բանակաւ առանց ընդդիմադրութեան, զիմելով Հայաստանի խորերն, յառաջ տանէ իւր նպատակը, Ասսակ թէ և իբրև ազգասէր քաջ Հայ, բայց լինելով անհեռատես փառամուր և նախանձոտ եսամուր, կայր գործիք է դարձել Միհրանբէկի ձեռքը:

Տ Ի Ր Ո Յ .

Եթէ նախանձու կրքից պաշարուած չլինէր մեր միտքն, անշուշտ Ասսակայ նպատակը մեզ առաջնորդ պիտի ընտրէինք, վասն զի նա գիտէ, որ Հայաստան շուրջ այն միջոցն ու զօրութիւնը, որ կարողանայ Պարսից ահագին պատրաստութեան զէմ ելնել, նա աշխատում է առ երեսս կատարել Յազկերտի առաջարկութիւնը:

Գ Ա Տ Ի Շ Ո Յ .

Թէ և ես յարգելով ազգի ամբողջութեան մէջ մեալը և ձեզ հետ միանում եմ արիւն թափել, բայց Ասսակայ նպատակն աւելի օգտակար եմ ճանաչում. մեր ազգութեան պահպանութեան համար պէտք է առ երեսս ընդունել Մազրիզանց օրէնքը և ուրանալ Քրիստոնէութիւնը:

Վ Ա Ր Գ Ա Ն .

Քաջ նիզակակիցք իմ, Ասսակայ գաղտնի և յայտնի գործոց ցուցակը

չէ մնում առանց քննութեան և պատժի, նորա փառասիրութեանը չափ և սահման չկայ, Հայրենասիրութիւն և ազգասիրութիւն բառերը քնքուշ դիմակներ են նորա երեսին, որով կամի ծածկել իւր ներքին նպատակն, այն է Հայերը կրակապաշտ անել, իբրև մի կաթիլ ջուր Պարսից Ովկիանոսի հետ խառնելով կորցնել՝ մի քանի օր թագաւարելու ցանկութեամբ, բայց նորա պիղծ փոշին պիտի չարժանանայ Հայաստանի հողին խառնուել, նորա անունն իբրև նախատինք և հայհոյանք պիտի յիշուի նորա գործակից ազգաւորացնիրին: (Վահրամ Կէ Գրնէ)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Բ .

Ա Ռ Ա Ջ Ի Ն Բ Ե Ի Վ Ա Հ Ր Ա Մ .

Վ Ա Հ Ր Ա Մ .

Պատուական Տե՛ղբ, Յազկերտի պալատական ծածուկ Քրիստոնեայ ներքինի Միհրանից ստացայ այս նամակն մի գաղտնի Քրիստոնեայ Հանի ձեռքով, (չէ որս Վարդանի)

Վ Ա Ր Գ Ա Ն .

Մեր այդ պատուական ներքինու խորհրդով թէ և ուրացութեան սարսափելի մեղքը գործեցինք, բայց մեր Հայրենեաց, Ազգի և Եկեղեցւոյ մեծ օգուտ եղաւ. եթէ մեր միայն մեր անձնական օգտին հետեւէինք, միայն մեր հոգւոյ փրկութեանը հոգ տանէինք, այժմ Հայաստանն արդէն խմած պիտի լինէր թշուառութեան դառն բաժակը: (չէ կարգայ Կարնի)

«Քրիստոսի ծառայ Միհրան ներքինի պալատական սպասաւոր Յազկերտ արքայի՛ Վարդան սպարապետի Մամիկոնեան և քաջ նիզակակից նախաբարաց գղջոյն»:

«Ես իբրև մի վտռ ճրագ թագչել եմ՝ դրուանի տակ՝ աշտանակի վերայ փայլած ճրագներին օգնելու նպատակաւ:

Տե՛ղբ իմ, Յազկերտ արքայն Ասսակ մարդպանի վաւերական նամակներով հաստատ տեղեկացել է, որ դուք խաբել էք զինքն և միացած ժողովրդի հետ՝ կոտորել էք մոզերին, քանզի էք ասորու շաններ, կոտորել էք Աղուանից մէջ Սերուխտի զօրքը և միանգամայն Ասսակայ կու սակիցների և արբունի զօրաց, հրամայեց Միհրանբէկին ահեղ պատրաստութեամբ զիմել Հայաստանի վերայ, բառնալ Քրիստոնէութիւն, և հաստատել ժողովան պիղծ օրէնքը, ժամ է ձեզ միանալ, կամաւոր զօրաժողով անել արանց և կամանց և ընդդիմանալ՝ բոլորովին յԱստուած սպաւինելով, որ կարող է սպիւններով բերուոր բազմութեան գործ կատարել, խնդրեմ մի՛ խնայէք ձեր արիւնը Հայրենեաց, ազգի և կրօնի պաշտպանութեան, յիշեցէք ձեր ուխտն, աշխատեցէք սրբել ձեր ուրացութեան կեղտը, մի

հաւատայք Աստակայ խաբերայ խօսքերին, Յազկերտ երգուել է արեգա կան վերայ՝ անշուշտ պատժել նորան իբրև ստախօս և երկու կողմի փնասակար թշնամի, Յազկերտի նպատակն է բառնալ Հայ անուներ՝ կուլ տալով իւր մէջ կամ ջնջելով, թէև Միհրնեբոսէ՛ս խաբէութեամբ խոստանում է Աստակին Հայոց թաղաւոր պսակել զինքն:

1851 թ. Փրկին: Ներքին Միհրնե  
Գ. Ա. Բ. Ե. Գ. Ի. Ե. Ի. Խ. Ո. Բ. Ե. Ե.

Կեցցէ՛ բայի ներքինին:

Վ. Ա. Բ. Գ. Ա. Ե.

Ներքինին և Աստակ հակապատկեր են միմեանց, նպատակն արգարացնում է միջոցը, եթէ Յազկերտ պարծում է Աստակայ նինգութեան վերայ, որից փնասուել է և ինքը մէք աւելի պարծում եմք ներքինու վերայ, որ իւր խոհական խորհրդով պաշտպանում է մեր ազգ և կրօն:

Գ. Ա. Տ. Ի. Ե. Ո. Յ.

Ներքինին իւր անհաւատարմութեամբ մեղանչում է Քրիստոնէական կրօնի դէմ, որ հրամայում է մարմնաւոր տիրոջ ծառայել ամենայն հնազանդութեամբ:

Խ. Ո. Բ. Ե. Ե.

Ներքինին մարմնով միայն ծառայ է Յազկերտին, իսկ հոգեով՝ Աստուծոյ է ծառայ և հաւատարիմ, նա պարզել է Աստակայ նպատակն, յայտնել է Յազկերտի դիտաւորութիւնը, մէք պատրաստ եմք լսել նորա խրատին և խորհրդին:

Գ. Ա. Բ. Ե. Գ. Ի. Ե.

Թող գայ Միհրնեբոսէ՛ս, Պարսկաստան իւր աւագ նախարարներին և զօրպետներին թաղելու հող չունի. նա ուղարկում է նոցա պիղծ դիակներն իբրև աղբ Հայաստանի հողը պարարտացնելու:

Վ. Ա. Հ. Բ. Ա. Մ.

Մէք ի զուր խաբուելով Աստակայ շողքորթ լեզուին բաց թողինք մէք Սմբատ Բագրատունեոյ օրինակին հեռեկեղու պարտաւոր էինք, հայրենեաց դաւաճանին Մեհրուժանի շամիրուրէ պսակաւ պսակելով:

Վ. Ա. Բ. Գ. Ա. Ե.

Հայրենեաց մասնիչ չար աղուիսու վերայ խօսելու միջոց չէ Ասհրամ, անցեալն էանց. աշխատելու ենք ներկայից օգուտ քաղել. գնա խորհրդի հրաւիրէ Համազասպանին, Արտակ Պալունուն, և Տաճատ Գնթունեոյն, նոքա ժամագիր հղած էին այսօր ներկայ լինել խորհրդին, մեր կամաւոր զօրաց թիւը 60 հազարի է հասել, յառաջ խաղալու եմք, մի՛ գուցէ թըլնամին փնասէ սահմանազլին:

Վ. Ա. Հ. Բ. Ա. Մ.

Հատ բարի (կէ Կինէ):

Գ. Ա. Գ. Ի. Ե. Ո. Յ.

Ես բոլորովին յուսահատ եմ յաղթութեան, չգիտեմ թէ ի՞նչ խելքով հաւաքեցինք մի քանի հազար խառնիճաղանճ անմարդ անձինք, նոցա վերայ յոյս դնելով, Պարսից անթիւ բազմութեան և կատաղի փղերի դէմ ելնել, որ մի ավի ջրի պէս պլտի խմէ մեզ. անհեռատես զործը ազգի և Հայրենեաց փնաս է և կործանման պատճառ. միթէ չէք վախենում ապագայ պատահանատուութիւնից, հէրիք է յամառութիւն պաշտել և լսել մեր անքողաքագէտ եկեղեցականաց խրատուց, որք կարծում են թէ՛ պատերազմը Սաղմոս ասելուց էլ հշտ է:

Տ. Ի. Բ. Ո. Յ.

Միթէ աւելի օգտակար չէ՞ Հայրենեաց, եթէ մէք ընծայներով Պարսից բանակի առաջ գնամք հաշտութիւն և խաղաղութիւն խնդրենք՝ առաջարկելով որ կրօնի վերայ բռնութիւն չլինի, ով ինչ կամենայ զայն պաշտէ. ես համոզուած եմ, որ Միհրնեբոսէ՛ս յանձն կանու մեր պայմանը, որովհետև Յազկերտ արդէն հրովարտակ ուղարկել է այդ նպատակաւ, և այժմ էթէ կամի պատերազմել, մեր ապստամբութիւնիցն է ստիպուել:

Վ. Ա. Բ. Գ. Ա. Ե.

Մենք չպէտք է բաղնութեան վերայ յոյս դնենք կամ բազմութիւնից վախենանք, մեր յոյսը Աստուած է միայն, յիշեցէք Հայկ, Յեսու, Գեղէն, Մակաբայեցիք: (Համապատեան) Աբրահմ և Տաճատ կէ Կինէ):

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԱՌԱՋԻՆՔ, ՀԱՄԱԶԱՍՊԵԱՆ, ԱՐՏԱԿ ԵՒ ՏԱՃԱՏ.

Վ. Ա. Բ. Գ. Ա. Ե.

Հրամայեցէք պատուական նիզակակիցք իմ, ձեզ եք սպասում, որ պէս զի միարան վճռենք յառաջ խաղալ. Պարսից բանակը Միհրնեբոսէ՛սի և Մուշկան Նիսալաւուրտի առաջնորդութեամբ արշաւումէ Հայաստանի վերայ, բառնալ Քրիստոնէութիւն և հաստատել Մաղղեզանց կրօնն, ինչպէս արդէն ստուգել են մեր հաւատարիմ լրտեսներն և հաստատումէ ներքինի Միհրանի այս նամակը, որի մէջ յայտնել է նաև Աստակայ դաւաճանութիւնը և նորա յուսոյ ունայնութիւնը: (Ցոյց տալով նամին):

Ա. Բ. Տ. Ա. Կ.

Մէք արդէն համաձայն եմք Խորհրդի վճռին, մեր վերջին հրոժեշտը տուինք մեր բնտանեաց, ամենայն ինչ կազմ է և պատրաստ, միայն ձեր որոշման ենք սպասում:

Հ Մ Ա Յ Ե Ա Կ.

Եսականութիւնը մեզ այս թշուառ զրուժեան հասցրեց, ազգը մահուան կամուրջի վերայ կանգնեցրեց. անշուշտ խրատուեցանք, պէտքէ միաբանեց մեր ընտրած և որոշած գլխադ, ընդհանուր սպարապետի գլուխը հրամաններին հնազանդելով:

Հ Ա Մ Ա Չ Ա Ս Պ Ե Ա Ն.

Եսականութիւնը Մազրեղանց օրէնքից աւելի պիղծ է և վնասակար թէ հոգւոյ և թէ մարմնոյ. Պարսկէն այնչափ վնասակար չէ մեզ, որքան մեր եսականութիւնը:

Տ Ա Ճ Ա Տ.

Հայոց տիրաւորութիւնը ծանօթ է աշխարհի, մենք սովորել ենք օտար տիրոջն անգամ հնազանդելու, մի թէ մեր ընկի գլխոյն պիտի հակառակե՞նք:

Խ Ո Ր Է Ն.

Տէր սպարապետ, ինչ որ օգտակարն է ազգի և եկեղեցւոյ պաշտպանութեան, հրամայէ մեզ, մեր յօժարակամ պատրաստ հմբ հնազանդել և գործադրել:

Տ Ի Ր Ո Յ.

Գրեթէ միշտ այդպէս է եղել, Հայեր ոչխարի պէս հետեւել են իւրեանց առաջնորդին, թէև դէպի վնասն առաջնորդած լինի, վնասակար խորհրդի և գործի մէջ միաբանու՞մ են Հայեր, իսկ օգտակարի մէջ եսութեան գրոշակ են պարզել:

Գ Ա Տ Ի Շ Ո Յ.

Երբ դուք բոլորդ միաբանել էք պատերազմել, մեք հարկադրուած հմբ հետեւել ձեր խորհրդին, թէև վնաս լինի հայրենեաց և ազգին, Աւրեմ հարգադրեցէք զօրքն ինչպէս և կամիք:

Վ Ա Ր Գ Ա Ն.

Պարգադրութիւններն և զօրաբաժնի զօրապետներ ընտրելն քաջ նիզակակցացդ է պատկանում, որ հայրենի կարգաւ պատուով և իշխանութեամբ վեր էք Մամիկոնեան տոհմից:

Ա Ր Տ Ա Կ, Հ Մ Ա Յ Ե Ա Կ, Գ Ա Ր Ե Գ Ի Ե Ն.

Ձեր ընտրութեանը մեք յօժար և համաձայն հմբ, վասն զի մեր մեր յօժար կամքը զքեզ ընտրել հմբ մեզ առաջնորդ և գլուխ:

Գ Ա Տ Ի Շ Ո Յ Ե Ի Տ Ի Ր Ո Յ.

Որովհետև բոլորի կամքն այն է, որ դուք ինքնահաճ ընտրութիւն աւնէք, մեք ևս համաձայն հմբ ձեր ընտրութեանն:

Վ Ա Ր Գ Ա Ն.

Քաջազնն Տեառք, ես ձեր խորհրդով և հաւանութեամբ կամենում եմ այսպէս կարգադրել. « բանակը շորս զօրաբաժնի լինի, Ա. զօրաբաժնի զօրապետ լինի Ներշապուհ իշխան Արծրունեաց և նորա օգնական Արտակ իշխան Մոկաց, և միւս նախարարք Արծրունեաց և Մոկաց իւրեանց գնտերով և համաժողովներով՝ հանդերձ կամաւորներով արանց և կանանց նոյն աշխարհաց: Բ. զօրաբաժնի զօրապետ լինի Խորէն Խորխոռունի և նորա նիզակակց՝ Ներսէս քաջբերունի իւր գնտով և կամաւորներով: Գ. զօրաբաժնի առաջնորդ լինի Թաթուլ Վանանդեցի, նորա օգնական լինի Տաճատ Գնթուկին իւր գնտով և կամաւորներով: Իսկ Գ. զօրաբաժնին ես վեր կանու՞մ և ինձ օգնական՝ Արշաւիր Արշարունին և իմ եղբայր Համազասպեանն: Հաւան էք այս ընտրութեան:

Հ Ա Մ Ա Չ Ա Ս Պ Ե Ա Ն, Խ Ո Ր Է Ն, Հ Մ Ա Յ Ե Ա Կ, Գ Ա Ր Ե Գ Ի Ե Ն Ե Ի Ա Ր Տ Ա Կ.

Այո՛, այո՛, արգար ընտրութիւն:

Գ Ա Տ Ի Շ Ո Յ Ե Ի Տ Ի Ր Ո Յ.

Արծրունեաց, Քաջբերունեաց և Վանանդայ իշխանները ներկայ չէին, ստացան աւագութեան պատիւ, մեք երկուքս իբրև տկար և անարգ, յետաձգեցանք:

Վ Ա Ր Գ Ա Ն.

Աւագութեան պատիւն արդէն ունիք ըստ հայրենի կարգին, իսկ այս պատերազմի մէջ աւագ և կրտսերն նոյն պատիւն ունին, իւրաքանչիւր ոք իւր սրտի և յօժարութեան համեմատ վարձ կստանայ երկուսոր Հանդիսադրէն, մարմնաւոր վարձուց ակնկալութիւն չկայ:

Տ Ի Ր Ո Յ.

Եթէ յաղթենք, ո՞չ ապաքէն իւրաքանչիւր զօրապետն ըստ աւագութեան սասիճանի Պարսից բանակի աւարն պիտի ստանայ:

Վ Ա Ր Գ Ա Ն.

Թշնամեաց բանակի աւարն միմիայն եկեղեցւոյ պայծառութեան և շինութեան պիտի պատկանի, յիշենք հին Իսրայելի յաղթութիւններն. մեք հարստութիւն զիզելու դիտաւորութեամբ չեմք պատերազմում, մեր ամենայն ինչք և ստացուածք պիտի զօհենք հայրենեաց և ազգի պաշտպանութեան և փրկութեան:

Ա Մ Ե Ն Բ Ը (բացի Գատիչոյց և Տիրոցից).

Այո՛, այո՛, թշնամեաց աւարն եկեղեցւոյ պայծառութեան և աղքատաց պիտուից պատկանի, և մեր ամենայն ինչք հասարակաց լինի:

Վ. Ա. Ր. Գ. Ա. Ն.

Ուրեմն տեսէք, իւրաքանչիւր որ ձեր գնտերի մէջ ինչ պակասութիւն տեսի, հոգացէք, կամաւորաց զէնք և զլրաց տուէք:

Ա. Մ. Ե. Ն. Ք. Բ.

Արդէն հոգացել եմք այդ պակասութիւններն մեր իւրաքանչիւրի սեպհականութիւնից:

Վ. Ա. Ր. Գ. Ա. Ն.

Ուրեմն առանց յապաղելու այսօր իսկ զէպ ի Տղմուտ գետ, Արտազու քաջտ յառաջ խաղանք, բռնենք ամբողջութիւններն, բանակն պաշտպանողական զրից մէջ պահենք, շնորհներ որ պիղծ Պարսիկն ոտն կոխի Հայաստանի սուրբ հողի վերայ, որ մորեխի պես փչացնուածն ընտիր հացաբոստներն, Համապասպեան, աստ Թովսէփ Վաթուղիկոսին, որ պատրաստ լինի այսօր ճանապարհ ընկնելու Խաչու և Աւետարանաւ բանակի առաջ, ինչպէս ի հնուան Մովսէս, Յետու Տապանակ ուխտիւ, իսկ ի նորումն Ներսէս Նպատ լերան վերայ, որովհետեւ մեր Ս. Հարց աղօթքը զէնքից աւելի զօրաւոր է և աստ որ բար Նիզակակիցներս միաբան են մինչև ի մահ պաշտպանել կրօն, ազգ և Հայրենիք:

Հ. Ա. Մ. Ա. Չ. Ա. Ս. Պ. Ե. Ա. Ն.

Թովսէփ Վաթուղիկոսը Աւանդ երիցու և եկեղեցական բոլոր դասու հետ արդէն կազմ է և պատրաստ, Չեր խորհրդի վերջին վճռին է սպասում, Աւանդ երեց այս գիշեր մինչ ի լոյս զօրաց մէջ շրջելով մի առ մի քաջալերել է և սրտապնդել իւր ճարտար լիզուով, գրեթէ ամենայն զօրք սովորել են Ս. Գրոց մէջ պատմուած քաջ նահատակաց պատմութիւններն և հրամայել է որ երկչոտներն, թերահաւատներն և ակամայ կամ առ երեսս եկող կամաւորներն ազատութեամբ դուրս գան բանակից. և շատ քչերն զանազան պատճառանօք հեռացան զէպ ի կորստական բաղանիք:

Վ. Ա. Ր. Գ. Ա. Ն.

Քաջ Նիզակակիցք իմ, դուք ևս հրամայեցէք ձեր գնտի մէջ եղած թերահաւատներին և վախկոտներին ազատութեամբ դուրս գալ բանակից, ոչ որ շատիպէ նոցա, վասն զի մեր յոյսը բազմութեան վերայ չէ, մէք Գէտեօնի ընտրութեանը հետեւելու ենք, սուր Տեառն և Գէտեօնի պիտի առաջնորդէ մեզ ցրուել թշնամեաց բազմութիւնն:

Գ. Ա. Ս. Ի. Շ. Ո. Յ.

Ուրեմն ակամայ եկողներն առանց բռնութեան պատահելու, կարող են շմանակցել պատերազմին:

Ա. Մ. Ե. Ն. Ք. Բ. (բաց ի Տիրոցից):

Այժմ այժմ թերահաւատներն, երկչոտներն և անմիտարաններն կամ ակամայ եկողներն ազատութեամբ դուրս թող գան, ոչ որ շարգիլէ նոցա:

Գ. Ա. Ս. Ի. Շ. Ո. Յ. Ե. Ի. Տ. Բ. Ո. Յ.

Մեր չկամիմք մասնակցել Հայրենեաց և Ազգի կործանման և զուր արեան, (չէ՛նէն):

Վ. Ա. Ր. Գ. Ա. Ն.

Շատերն են հրաւիրուած, բայց քչերն են ընտրուած, ասում է Յիսուս:

Հ. Մ. Ա. Ս. Ե. Ա. Ն.

Ուղկանով հաւաքածներից ընտրութիւն անել, խոտաններ մերժել և բարիներ ընդունել, Յիսուսի հրամանն է: (Վահրամ չէ՛նէն):

Տ. Ե. Ա. Ր. Ա. Ն. Գ.

Ա. Ո. Ա. Ջ. Ի. Ն. Ք. Ե. Ի. Վ. Ա. Հ. Ր. Ա. Մ.

Վ. Ա. Հ. Ր. Ա. Մ.

Տեառք իմ, Ատրպատականից եկաւ Աւհան Գնունին նա քաջ լրտեսել է թշնամեաց բանակն, պատմեց Թովսէփ Վաթուղիկոսին իւր տեսածներն և ահա գալիս է ձեզ մօտ:

Վ. Ա. Ր. Գ. Ա. Ն.

Վահրամ, աստ որ ժողովը ցանկանումէ լսել նորա տեղեկութիւններն, թող ներկայանայ:

Վ. Ա. Հ. Ր. Ա. Մ.

Շատ բարի (չէ՛նէն):

Խ. Ո. Բ. Ե. Ն.

Աւհան Գնունին իւր իմաստուն հնարագիտութեամբ շատ կարեւոր գործերի ականատես եղած կլինի, սպասենք նորա տեղեկութեանց:

Հ. Ա. Մ. Ա. Չ. Ա. Ս. Պ. Ե. Ա. Ն.

Աւհանի . . . բայց ահա և ինքն Աւհան. (Վահան չէ՛նէն):

Տ. Ե. Ա. Ր. Ա. Ն. Ե.

Ա. Ո. Ա. Ջ. Ի. Ն. Ք. Ե. Ի. Վ. Ա. Հ. Ր. Ա. Մ.

Վ. Ա. Ր. Գ. Ա. Ն.

(Ուրի ելնելով հաճախումէ վահանին), ողջ է գալուստ քո. փառք, որում վայելէ պատիւ և փառք:

Ա. Մ. Ե. Ն. Ք.

Յաջողութիւն, յաջողութիւն:

Վ. Ա. Հ. Ա. Ն.

Պատուական Տիարք, ես յաջողեցայ մտնել Պարսից բանակի մէջ իբրև Վասակի կուսակից, բոլոր բանակն և նոյն իսկ Մուշկան Նիսալաւուրտը թերահաւատումէ յաղթութեան, մեր միութիւնը մեծ երկիւղի մէջ է գցել թշնամուն. Վասակ յայտնեց իւր կուսակցաց, որ Միհրնիսեհէն ձեռք ստացել է Հայոց վերայ թագաւորելու իշխանութիւն և զինի յաղթութեան կստանայ թագ և գաւազան: Միհրնիսեհէն գնաց արքայի մօտ և բոլոր բանակն յանձնեց Մուշկան Նիսալաւուրտին և Վասակին, նորա կարգադրեցին բանակն, կատարի փղերն խուճք խուճք բաժանեցին Արտաշրի առաջնորդութեամբ և իւրաքանչիւր գազանին երեք հազար սպառազէն, բոլորի ուշադրութիւն պիտի լինի Վարդանի զօրաբաժնի վրայ յարձակելու պատրաստեցան գալ Արտազու դաշտ և յարձակողական զիւրք բռնել, հրամայեցին զօրաց անխնայ կոտորել արք և կանայք, ծերք և մանկունք, հրոյ ճարակ անել եկեղեցիներն, իսկ Վասակ խաբուժ էր իւր կուսակիցներին թէ, Յազկերտ կրօնի ազատութիւն է տուել, բայց Վարդան և իւրայինք կաշառուած Յունաց կայսերից՝ ապստամբել են, նաև խոստացաւ ուրացողներին և միամտութեամբ իրան հետևողներին թէ, Հին նախարարաց տոհմը պիտի ջնջուի և նոր նախարարաց տոհմը պիտի նշանակին իւր թագադրութեան օրը, նորա պատրաստեցան յառաջ խազալ, ես փութացի Հայաստան, Տղմուտի մօտ պատահեցայ մի Պարսկի և մի Հայու, նոցա պատ ի պատ հակասական խօսքերից գուշակելով որ լրտես էին, երկուքին ևս Տղմուտին յանձնեցին, և ահա նոցանից խլածս մատնութեան և դաւաճանութեան նամակներն: (Կըրոյ Վարդանին):

Ա. Մ. Ե. Ն. Բ. Ը.

Պեցցէ Վահան Գնունի:

Վ. Ա. Բ. Գ. Ա. Ն.

(Յոյց որով նամակի վաւերան կնիքն) պատուական նիզակակիցք, տեսէք Վասակայ մատանու վաւերական կնիքն, (Վ. Ա. Բ. Գ. Ա. Ն. Ը.)

Ա. Մ. Ե. Ն. Բ. Ը.

Այո՛, դաւաճանի կնիքն է, կարգացէք:

Վ. Ա. Բ. Գ. Ա. Ն.

(Կը կըրոյ) «Վասակ նորապսակ արքայ Հայոց, պաշտպան Հայրենեաց, իմ սիրելի Տիրոց իշխանին Բագրատունեաց և Քաղիշոյ իշխանին Խոռխոռունեաց ողջոյն»:

Այսօր Միհրնիսեհէն հրամանաւ Յազկերտի անուանեց զիս թագաւոր Հայոց, ես զձեզ ինձ հաւատարիմ ճանաչելով և միանգամայն հոգատար Հայրենեաց, խոստանում եմ յետ յաղթութեան կարգիլ զձեզ (Քաղի-

շոյ) ընդհանուր սպարապետ և (Տիրոց) թագադիր Սիւնեաց թագաւորաց, աշխատեցէք զօրաբաժիններ ձեր իշխանութեան ներքոյ առնել, և ճակատամարտի ժամանակը ձեր կուսակիցներով շփոթութիւն գցել բանակի մէջ, յաղթելու փողեր հարկանել, խոյս տալ, մեր կողմն անցնել. եթէ հնար է՝ նոյն միջոցին Վարդանին և իւր համահոհներին վտանգելու կամ մեր ձեռք գերի գցելու միջոցներ գտէք, իսկ եթէ այս չյաջողի ձեզ, գողացէք թէ «Վարդանն ընկաւ» վերջապէս ամենայն տեսակ հնարքներ հնարեցէք իմաստութեամբ, որպէս զի առանց բազում արիւնհեղու-թեան կարող լինինք հասանել մեր նպատակին»:

Յաւաջին ամի թագաւորութեան Սիւնեաց:

Վ. Ա. Բ. Գ. Ա. Ն.

Նորագոյն արքայ Հայոց:

Ա. Մ. Ե. Ն. Բ. Ը.

Սնիծեալ լինի Վասակայ և իւր կուսակցաց յիշատակն:

Վ. Ա. Բ. Գ. Ա. Ն.

Համալսակական փութա բռնել Պատիշոյ և Տիրոց դաւաճան իշխաններն:

Հ. Ա. Մ. Ա. Զ. Ա. Ս. Պ. Ե. Ա. Ն.

Պարզին մատնիչք Հայրենեաց. (Կը Կնիքն):

Վ. Ա. Բ. Գ. Ա. Ն.

(Յոյց կըրոյ Վ. Ա. Բ. Գ. Ա. Ն.) Տեսէք նաև Զանգակ և Պտորոս ուրացող քահանայից կնիքներն:

Ա. Մ. Ե. Ն. Բ. Ը.

(Կնիքն Վ. Ա. Բ. Գ. Ա. Ն.) Այո՛, այո՛, նոցա կնիքներն և մատնիչ ձեռագրերը են:

Վ. Ա. Բ. Գ. Ա. Ն.

(Կը կըրոյ) «Զանգակ և Պտորոս Երեցք Սիւնեաց, Մողպետ և Ատրուշանապետ մեծին Հայաստանի՝ Սահակ Սարկաւագի Սիւնեաց ողջոյն»:

Այսօր պատիւ ունեցանք ներկայանալ Միհրնիսեհէն և նորա հրամանով կարգեցանք մոզպետ և ատրուշանապետ Հայոց, բոլոր Հայ քահանայից ինչք և ստացուածք, կանայք, հարսուկք և աղջկուկք մեզ պարգեւից, մեր իրաւունք ունիմք տալ ուժ որ կամենանք, զքեզ կարգում ենք Ատրուշանապետ Արտաշատու, և նոյն տեղի բոլոր քահանայից ստացուածք և նոցա աղջկուկք և հարսուկք և կանայք քեզ սեպհականութիւն. միայն թէ աշխատիր եկեղեցականաց և նախարարաց մէջ խռովութիւն գցել, նոցա միութիւնն քանկել և միմեանց կասկածելի ցոյց տալ. վիաներով հաստատեցէք, որ Յովսէփ Վաթուղիկոս, Սահակ Եպիսկոպոս և Ղեւոնդ Երեց կաշառուել են Յունաց կայսերից և կամենում են Հայոց եկեղեցին միացնել Յունաց եկեղեցւոյ հետ, որի համար ապստամբել են Արեւոց զոնից:

Վերջապէս աշխատեցէք երկպառակութիւն զցել Վարդանայ զօրաց մէջ որպէս զի կարողանանք յաղթել և մեր նպատակին հասանել Թերևս քիչ օրից յետոյ կտեսնուինք ։

Զանգակ Գեղեթ Հայոց ։

Պետրոս Կարբուշտապետ Հայոց ։

Յառաջին ամի լուսաւորութեան Հայաստանի ։

ԽՈՐԷՆ ։ ԱՐՏԱԿ ։ ՀՄԱՅԵՍԿ ։

Պորշին անարժան Բրբիշոյի ձեռնադրած անարժան պաշտօնեայք ։

ՏԱՃԱՏ ։

Գնամ որոնել ամբարիշտ Սահակին ։ ( Կը Տէնէ ) ։

Վ. Ա. Ր. Գ. Ա. Ն. ։

Նախ դաւաճաններն ձեռքազալել և ապա յառաջ խաղալ ։ ( Հասարակական կը Տէնէ ) ։

ՏԵՍԱՐԱՆ Զ ։

ԱՌԱՋԻՆՔ ԵՒ ՀԱՄԱԶԱՍՊԵԱՆ ։

Հ Ա Մ Ա Ջ Ա Ս Պ Ե Ա Ն ։

Տեաք իմ ։ Գաղիչոյ իշխան անմիջապէս խոյս տուել է դէպ ի Պարսկաստան իւր գնտովն ։ միայն յաջողեցայ բռնել Տիրոց իշխանին ։ կամենամ էի բանտարկել ։ Վ. Լ. ռնդ երէց վրայ հասաւ և հրամայեց իսկոյն քարկոծեցին ։

Ա Մ Ե Ն Ք ։

Պորշին մատնիչք Հայրենեաց ։

Հ Ա Մ Ա Ջ Ա Ս Պ Ե Ա Ն ։

Յովսէփ Կաթուղիկոսն և համայն եկեղեցական դասն կազմ է և պատրաստ յառաջ խաղալու ։

Վ. Ա. Ր. Գ. Ա. Ն. ։

Օ՛ն և մեր ։ ( Վահրամ կը Տէնէ ) ։

ՏԵՍԱՐԱՆ Է ։

ԱՌԱՋԻՆՔ ԵՒ ՎԱՀՐԱՄ ։

Վ. Ա. Հ. Ր. Ա. Մ. ։

Քաջագուն Տեաք ։ բանակի մէջ գոռայ մի Պարսիկ լրտես ։ զոհեցի աւրուշանին ։ ահա նորանից խլածս նամակն ։

Ա Մ Ե Ն Ք ։

Վեցե՛ս քաջ Վահրամ ։

Վ. Ա. Ր. Գ. Ա. Ն. ։

( Նահալ Բայ Կանէ ) ։ Ահա և Սահակ սարկաւազի դաւաճանութիւնն ( կը կարօտայ ) Սահակ սարկաւազ Սիւնեցի ։ քաջին Վասակայ պաշտպանին Հայրենեաց խնդալ ։

Այլ ևս զուր է աշխատել քանդելու Վարդանայ բանակի միութիւնն ։ աշխարհականք և եկեղեցականք միացել են ինչպէս մարմին և հոգի ։ ամբողջ Հայ ժողովուրդ իրրե մատուցոյ պատգամ է ընդունում Յովսէփ Կաթուղիկոսի և Վ. Լ. ռնդ երիցոս հրամաններն ։ բոլոր իշխաններն լսում են Վարդանին ։ բանակն այսօր յառաջ պիտի խաղայ դէպ ի Արտազուղաշտն ։ և այսօր բոլոր կասկածաւորներին խուզարկում են ։ Վարդան իւր սղատ կամօք զօրքն շորս մասն բաժանեց ։ մեր կուսակիցներից ոչ մին զօրաբաժնի զօրապետութեան պաշտօն չստացաւ ։ Գատիչոյ և Տիրոց իշխանաց աշխատանքներն զուր անցան ։ Զանգակ և Պետրոս քահանայք կրկին չզառնան Հայաստան ։ անշուշտ կրու՛նուին ։ նոյնպէս և զուր խնայեցէք ձեր անձին վիհազուն Տէր ։ կրկին չմտնել Հայոց բանակի մէջ ։

Սահալ Սարկաւազ Սիւնեցի ։

Հ Ա Մ Ա Ջ Ա Ս Պ Ե Ա Ն ։

Ո՛հ ։ Հայաստանի ներքին թշնամի մատնիչներ ի եղեւնագործութիւնք աւելի վտանգաւոր են քան Յաղկերտի և Մոզպետի չարիքներն ։

Վ. Ա. Ր. Գ. Ա. Ն. ։

Զի՛ք ։ չիք վատաց ։ չիք յաջողուած ։

Յերկնից գոչէ որ էնն Աստուած ։

Մեռցին մատնիչք մարդկան Վասակ ։

Սուտ քահանայք Պետրոս Զանգակ ։

( Պետրոս և Զանգակ Կահանայ Կը Տէնէ ) ։

ՏԵՍԱՐԱՆ Ը ։

ԱՌԱՋԻՆՔ ։ ԶԱՆԳԱԿ ԵՒ ՊԵՏՐՈՍ ։

Զ Ա Ն Գ Ա Կ Ե Ի Պ Ե Տ Ր Ո Ս ։

Ողջոյն ձեզ քաջագունք Հայոց ։

Վ. Ա. Ր. Գ. Ա. Ն. ։

Ի բաց ի բաց ։ մատնիչք Հայրենեաց ։ Իսկարովտացիներ ։ բռնեցէք այդ որոմնացաններին ։

Զ Ա Ն Գ Ա Կ ։

Մեր չեմք որոմնացան ։ այլ քարոզող բանին ճշմարտութեան ։

Պ Ե Տ Ր Ո Ս ։

Ախոսո՛ւ որ առանց կարգալու մեր սիրտը ։ դատէք մեզ յանիրաւի ։

ԽՈՐԷՆ ։

Շղթայի զարնուին այդ խաբեբայ մատնիչներն ։ ձեր որտեղը մատնան սատանայի են և միայն Սաղայէլ կարող է կուրդալ ։ ( Երկու ղեկուորներ կը մտնեն ։ շղթայի կը դարնեն Պետրոսին և Զանգակին Վահրամ օգնութեամբ ) ։

Չ Ա Ն Գ Ա Կ .

Մեր քրիստոսի փոխանորդներ ենք, զուր բնու իրաւունք չունիք Աստուծոյ օծեալին ձեռք մտել, մեր իշխանութիւն ունինք Յիսուսից՝ կապել և արձակել ձեր հոգին և մարմին, մեր կապածն կապուումէ երկնքում և արձակածն արձակում է, զուր մեզ չլսելով և արհամարհելով Յիսուսին չէք լսում և արհամարհումէք:

Պ Ե Տ Բ Ո Ս .

Դուք ուրացող մտնրապաշտներ, զնացիք Պարսկաստան, ուրացայք զՔրիստոս, կրօն պաշտեցիք, այժմ ևս միացած Յունաց հետ, ապստամբում էք և զուր կոտորումէք ժողովուրդ, անիծեալ և նըղովեալ լինիք:

Վ Ա Ր Գ Ա Ն .

Պապանձկեք անզգամ մոգեր, ձեզ նման գայթակղիչների պարանոցներից մի մի մեծ քար կտնել և ծովու յատակն ինկնել Յիսուսի հրամանն է:

Հ Ա Ս Յ Ե Ա Կ .

Երբ մեր չհետեւինք Սմբատ Բագրատունւոյն, այս մատնիչներին Մեհարուժանի շամիրէ պտակաւ պսակելու, մեր Հայրենեաց կը մեաներ, զուր գայթակղութեան քար պիտի դառնան և շատերի կորստեան պատճառ պիտի լինին:

Չ Ա Ն Գ Ա Կ .

Մեր ի սէր քրիստոսի և փրկութեան Հայրենեաց պատրաստ ենք կրել ամենայն հալածանք և նախատինք, բայց զուր ուրացողներ, խնայեցէք անմեղների տրեան, որոց պարտական պիտի լինիք Աստուծոյ առաջ, թողէք որ փոքր ինչ ցամաքին Հայաստանի լեռներն և դաշտերն Հայոց արիւնից, զուր մի՛ պատերազմիք, այսօր Վասակ հրովարտակ ստացաւ Յազկերտից, կրօնի ազատութիւն և ամենայն յանցաւորաց կատարեալ ներողութիւն է շնորհել, Պարսից զօրքն եկել է Վասակին թագաւոր կարգելու, զուր եթէ սիրումէք Հայրենիք, Ազգ և Կրօն, սիրով ընդունեցէք մեր Հայկազուն թագաւորնին, առանց ետութեան և անմիաբանութեան կործանիչ նըպատակին և գաղափարին հետեւելու:

Վ Ա Ր Գ Ա Ն .

Անզգամ խորերաներ, Վասակայ պիղծ դիակն անգամ չի արժանանայ Հայաստանի հոգի մէջ թաղուելու, ամաչեցէք ձեր այս դաւաճանող նամակներից (ցոյց կը տայ նամակներն):

Չ Ա Ն Գ Ա Կ .

(Նամակի քոյր երեւելով) Այդ մեր զրածներ չեն, և մեր կնիքներ չեն, խորդաւաններ է, կը բողոքենք մարդկան և Աստուծոյ առաջ:

Պ Ե Տ Բ Ո Ս .

(Նամակն քրեւելով) Ոչ իմ գիրս է և ոչ կնիքս, խորդաւան կնիք է, Վասակ երիցու գործն է, կը բողոքեմ Աստուծոյ արդարութեան:

Չ Ա Ն Գ Ա Ս .

Չորանայ ձեան, որ միշտ զորում  
Յանէ Հայոց անդաստաներ,  
Կուրանայ աչքն այն վատասես,  
Որ սպասէ պտուղն քաղիլ:

Հ Ա Ս Յ Ե Ա Կ .

Ամօթ, ատօթ ձեր վատ ճակատին,  
Որ միշտ սիրէք զրաժանու մն,  
Բաժանեցէք զուր մեր մէջից,  
Որ նախատինք էք Հայ անուան:

Գ Ա Ր Ե Գ Ի Ն .

Միայն բանիւ լոկ ազգասեր  
Չեանայք զուր կեղծաւորներ,  
Ապականիչ չար աղուէտներ,  
Մատնիչք ազգի անարգ ցեղեր:

Վ Ա Ր Գ Ա Ն .

Կորչին մատնիչք մարդպան Վասակ,  
Սուտ քահանայք Պետրոս Չանգակ  
Եւ գործակից Նոցին Սահակ,  
Պիղծ մեհենին վատ սարկաւագ,  
Անհետացի ան յիշատակ:

Փութով բանտարկեցէք այդ ազգուրաց, կարգընկէց դաւաճաններին,  
յետ յաղթութեան ընդհանուր դատաստանաւ քննելու:

Պ Ե Տ Բ Ո Ս .

Ափսոս, որ չէք ճանաչում ազգի և Հայրենեաց օգուտն, զուր ձեր անմիաբանութեամբ և եսամոլութեամբ կործանումէք Հայրենիք, Ազգ և Կրօն, չլսելով Հայրենասէր Վասակայ:

Վ Ա Ր Գ Ա Ն .

Հեւացէք անզգամներ, եթէ մեր շխարհինք Վասակայ սուտ երգմանց և կեղծասորութեանց, արդէն յաղթող հանդիսացել էինք այժմ, այն չարեաց վատտակ Վասակ, կամակից և որչ ստատանայի փատամնը Վասակ եթէ չլինէր, զուր ցէ և Յազկերտ կրօնի խնդիրը մաքից անգամ չէր անցկացնում, նա իբրև Հայոց խօսքով խարեց Յազկերտին, որպէս զի յարգ գտներ Նորա մտ, տիրէր Հայոց, և Վարազվազանից առներ իւր վրէժն, նա արդէն կրկին և կրկին փորձուել է, Աստուծոյ և մարդկան կշից ու փորձաքարից անցել է և ցոյց է տուել իւր ժանգոտութիւնն:

Չ Ա Ն Գ Ա Կ .

Երբն ձեր ի գլուխ ձեր եղիցի, մենք անպարտ եմք անմեղ տրեան, Հայ-

ընենաց կործանման, մեր արիւն ևս խառնեցէք զուր թափած արեանց  
Հետ, որ բողոքէ Աստուծոյ արդարութեան ի վրէժխնդրութիւն:

Վ Ա Ր Գ Ա Ն.

Բաւական է զառանցել, Վահրամ, Հեռացրէք այդ ոչխարազգեստ զայ-  
լերին: (Վահրամ և երէն զինորդներ որոնք են քանոս ջանքային և Պեբբոնին):

Չ Ա Ն Գ Ս Կ Ե Ի Պ Ե Տ Ր Ո Ս.

(Գանկ) Պատմութիւն և պատգայն պիտի վկայեն մեր արդարութեան  
և ձեր անիրաւութեան: (Կը Տէրին, Տճար կոթնէ):

Տ Ե Ս Ս Ր Ա Ն Թ.

Ա Ռ Ա Ջ Ի Ն Ք Ե Ի Տ Ա Ճ Ա Տ.

Տ Ա Ճ Ա Տ.

Տեանք իմ, Սահակ սարկաւազը անմիջապէս խոյս է տուել դէպի Պարս-  
կաստան Գաղիչոյի գնտի Հետ. մեր յառաջապահ զօրքն Առանձար Ամա-  
տուեռ առաջնորդութեամբ մեծ ջարդ է տուել Պարսից հրոսակներին  
յայտկոյս Տղմուտի, ուր եկած էին աւար յափշտակելու:

Վ Ա Ր Գ Ա Ն.

Օ՞ն ուրեմն և մէք, թող հարկանեն փող արշաւելոյ, թող ծածանի  
Խաչի զրոշակը: (Վահրամ ինքն):

Տ Ե Ս Ս Ր Ա Ն Թ.

Ա Ռ Ա Ջ Ի Ն Ք Ե Ի Վ Ա Հ Ր Ը Մ.

Վ Ա Հ Ր Ո Մ.

Տէր իմ, տիկին Գասրիկ Վարդ մանուկ գրկած Տարօնոյ կամաւոր զօրա-  
կանի և կանանց Հետ բանակի մէջ մտաւ, ես ճանաչեցի նորան, բայց  
խնդրեց, որ չյայտնեմ ձեզ, որ միգուցէ արգելք լինիք իւր նպատակին:

Վ Ա Ր Գ Ա Ն.

Ո՞չ, ո՞չ, ես չեմ զրկում զինքն լուսեղէն պսակից, կարող է իրագործել  
իւր նպատակն, զորանով նա ցոյց է տալի թէ Վարդանայ արժանաւոր ա-  
մուսին է. կանանց յարմարաւոր զէնքեր բաժանիր Վահրամ և Գասրիկին  
Վարդի Հետ տար Համազասպեանի վրանը, հոգա ճանապարհի պակա-  
սութիւններն:

Վ Ա Հ Ր Ո Մ.

Շատ բարի: (Ինքն):

Վ Ա Ր Գ Ա Ն.

Փողեր հնչելին, բոլոր զօրագլուխներն և պաշտօնակալներ հաւարեն խա-  
չաղբոջի տակ վրանի հանդէպ, (Խաչի Գրոշակ ինքն, Գողեր ինքն, Կո-  
րպետներ երբեք ինքն  
նախարար Բացի Վարդանից):

Ե Ր Գ.

Քաջին Հայկայ նա է զաւակ,

Մեր սուրբ կրօնին նա է հպատակ,

Որ զանձն զօճ տայ իւր արգին,

Նորա լեզուին և կրօնին:

Անցէ կրօն Քրիստոսական,

Մեզին ստիպ մեր յաւիտեան,

Անցեն հըռ Հայկայ որդիք,

Մեզին ըմբոստ մեր թշնամիք:

Անցեն պաշտպանք մեր կրօնին,

Մեզին նենգողք Հայոց ազգին,

Անցեն քաջիք, մեզին վատեր,

Մեզին Վասակ և զրժոյներ:

Անցէ սուրբ սէր և միութիւն,

Անցէ Վարդան մեր քաջագուն,

Նիզակակիցք իւր համազոյն

Անցեն պաշտպանք եկեղեցւոյն:

Անցէ կրօն մեր լուսասուն,

Անցէ Աթոռն Արարատու,

Անցէ յաւերժ Հայկայ ոգին

Ոստին առցէ զԲելայ բաժին:

Վ Ա Ր Գ Ա Ն.

(Բարձր և խրոխտ յայտով) Միրելի ընկերակիցներս, ձեզ Հետ շատ պատե-  
րազմեհի մէջ մտել իմ, շատ անգամ յաղթող հանդիսացի եմք և մե-  
ծամեծ պարգևներ ստացել եմք մահկանացու թագաւորից, բայց այս պա-  
տերազմը անմահ թագաւորի հրամանաւ է, աւելի պարտաւոր եմք քաջու-  
թեամբ նահատակել, չվախնալով հեթանոսաց բազմութիւնից: Յիշեցէք  
Գեղէօն, յիշեցէք Մակարայեցիք, յիշեցէք մեր նախահայրն Հայկ, յիշե-  
ցէք մեր յաղթութիւնն Աղուանից մէջ. այս ամենը Յիսուսի յաջողու-  
թիւնն էր միայն, յիշեցէք, որ մէք այս նպատակի համար առ երեսու ուրա-  
ցանք մեր հաւատը Պարսից դուռն, որպէս զի Հայաստան վերադառնալով  
և ձեզ Հետ միանալով փրկէիք մեր եկեղեցին, և մեր արիւնով լուսնա-  
յիւք մեր ուրացութեան կեղտն: Քաջ ընկերակիցք իմ, այս մեծ բազմ և  
պատիւ է մեզ, Աստուծոյ օրինաց վերայ դնել մեր անձներ, և ստանալ  
երկնքում անթառամ պսակ, իսկ երկրի վերայ բարի անուն: Թէ յաղ-  
թենք և թէ յաղթուինք վարձք կտտանանք, աշխատենք յաղթել և ազա-  
տել մեր եկեղեցին հեթանոսաց ձեռքից, որ կամենում են ատուշան գար-  
ձուցանել և մեզ և մեր որդիք միխրապաշտ անել, հոգւով և ազգութեամբ  
կորուսանել, ջնջել յերկրէ Հայ անուն և Հայ եկեղեցին:

ՉՕՐԱՊԵՏԻՐ

Ի սեր փրկութեան Հայրենեաց, Ազգի և Կրօնի պատրաստեմք և ուրախ  
մեր արիւնը թափելու:

Վ Ա Ր Գ Մ Ն

Օ՛ն ուրեմն դէպի ս. պատկ (հոգեւն քող հարկանել և երբէլ):

Ե Ր Գ

Երբք մարտիկք զոռ Հայկազեան,  
Ի զէն, ի ռազմ, ի գուպար,  
Զվոհմակ զիւաց պիղծ Սասանեան  
Վանել իբաց քաջաբար:

Վ հատու թիւն զն քաջ իբաց,  
Ի մեր սրտից բարձցի թող,  
Զի Աջ Էին Հօրն իբարձանց  
Օճան բազկացս է յաղթող:  
Գունդք աղու իսուց վատասրտաց  
Առցին զողումն, սարսափ յոյժ,  
Պողովատիկ սուրք զիւցազանց  
Ի սիրտ նոցին խուժագուժ:

Օ՛ն անդր յառաջ,

Գուք կորովիք:

Անեղին աջ

Չեզ զօրաւիք:

(Չօրտ հոգեւն սրտից քրտեմանով անցնել իւրաքան իւրայնն հետեւելով, վարքան  
սուսեր պատեմից հանած քրտեմանի օտարից քնոմե):

Վարաժայր կիջնէ

(Վարաժայրը ծածկած ծանանայր օն կարգաւս է « Էնի ե՞ն լուեւ » երբն, քեռ  
ք. քրտեմանեան վերջն):



Գ Ո Ր Ծ Ո Ղ Ո Ի Թ Ի Ի Ն Գ

ՏԵՍԱՐԱՆ Ա

Տղմուտ գետի ափան մտտ մի ապառաժուտ տեղ, ամպամած դիւեր է, լրացեա  
լուսինն երրեմն ամպի տակից զուրս է զալիս եւ երրեմն ծածկում: )

ԳՍՏՐԻԿ ԵՒ ՎԱՐԳ

ԳՍՏՐԻԿ

Ղուսնեանկ, տխուր սրտի սփոփանք, այսօր զու էլ ինայումնս քո աղօտ  
և մեռելատիպ լոյսը յուսաբեկ թշուառիս. զու ընկեր ես առանձնա-  
կեացին և պանդխտին . . . . կենացս մեջ ոչ մի գիշեր այսպէս  
տխուր երեւոյթ չէր պատահել ինձ, ինչպէս այսօր. երեսուն տարի է Վար-  
դանայ հետ միացրել է զիս Հայաստանի Հովիւ, իմ սկեսայր և Հայր Սա-  
հակ Պարթև Հայրապետ, երեսուն տարի է Սոխակ Վարդանայ բոյն եմ  
դարձել, երեսուն անգամ հազիւ Սոխակն իւր զայլայլիկներով զուարճա-  
ցրել է ինձ, Հայրենեաց պիտոյքը միշտ ստիպել է Վարդանին թափուր  
թողուլ մենարանս, առագաստս, միայն սիրուն ձագուկներս սփոփել են  
զիս, բայց այսօր իմ միակ Վարդա՛յ որից Սոխակի սէրն է բուրում, աչ-  
քիս խորթ և օտար է թուում. մոռացել եմ ծնողական գուժն . . . .  
(հարբանք է վարդին). . . . անհոգ, ո՛ր եմ ես, ո՛ր եմ թափառում, Աս-  
տուած իմ, բոլոր բնութիւնն այսօր սուգ է զգեցել, (տո՛ւմ է որդե՛անի  
յայեր, երեսուն է հայրակ), ահեղ փոթորիկ, անսովոր որոտումն և կայծակ  
սարսափ են գցում անշունչ արարածներին անգամ. . . . իսկ մի քայլ այն  
կողմը՝ Տղմուտի իւր տխուր և արիւննոտ կոհակներով է ողբում, խշում.  
. . . . ծաղիկներից և խոտերից արեան հոտ է բուրում, վիրաւորեալների  
վերջին հռնդիւն և հառաչն օսկորներս են զողացնում. . . . ոչ մի կենդանի  
շունչ չեմ լսում. դատարման փողերն վաղուց լուկ են, գիակապուսները  
քաշուր են. այրի կանայք աւար են գնացել թշնամեաց, Տղմուտի մեր-  
ձակայք աւարայրի անուն են ստացել, այրի է Հայաստան, այրի են  
Հայ տիկնայք:

Վ Ա Ր Գ

Մայրիկ, ես միտում եմ . . .

ԳՍՏՐԻԿ

(Չլուսնի վարդին) Ոչ մի աւետարեր, ոչ մի բօթարեր չերեցի, իմ պատ-  
ւական տարք Համազասպանն ևս չերեցի, գուցէ և նա . . . . անհոգ,  
Աստուած իմ, ինչ տխուր յիշատակներ են ծագում մտքումս . . . .

Վ Ա Ր Գ

Մայրիկ, ես միտում եմ . . .

Դ Ս Տ Ր Ի Կ .

(Աւանց ուղարկուելու Գրքի) Վարդանայ ինձ պարգևած այս երկսայրի սուրս այսօր շատ սրտեր խոցեց, շատերին արևից զրկեց, բայց տխուր բարդս շնորհից ինձ մտնել Վարդանայ զօրաբաժնի մէջ, տեսնել նորա քաջութիւններն, միայն նորա առիւծաձայնն էի լսում, որ լեռներ էր թընտացնում. . . Երբ թշնամեաց գունտը կանանց վերայ յարձակեցաւ ամենայն կատաղութեամբ, ուր պսակ պիտի ընդունէի անշուշտ, եթէ Վահրամ չյափշտակեր զիս, որ պահապան Տրեշտակի պէս դիտուէր իմ շարժմունքներս, թերևս Վարդանայ Տրամանաւ . . . : Անգութ լուսնիակն դուրս ել ամպի տակից. գնամ ընկածների մէջ ման գամ, գուցէ, ա՛հ, տխուր յիշատակ. ո՛ւր է Հայոց բաղտն սւ արևն, իմ կեանքս և երջանկութիւնս . . . ո՛հ, ո՛ւր է Վարդան . . . : Վարդան . . . :

Վ Ա Ր Գ .

Մայրիկ, գնանք մօտ Վարդան, ես մրսում եմ, ցուրտ է, ինչի միայնակ նստել ենք այս ապառաժի վերայ, գնանք Համազասպեանի վրանի տակ, գուցէ Վարդան այն տեղ լինի, Համազասպեանն ասում էր ինձ թէ, այսօր անշուշտ պիտի տեսնես Վարդանին :

Դ Ս Տ Ր Ի Կ .

(Վերադառնալով Թաթևա՛ս է Վարդին) Արդեակ իմ Վարդ, սպասենք փոքր ինչ, ա՛հա լուսինն ամպի տակից դուրս է գալիս, նա մեզ ցոյց կը տայ թէ այժմ ուր է Վարդան :

Վ Ա Ր Գ .

Միթէ Վարդան ամպերի մէջ է գնացել :

Դ Ս Տ Ր Ի Կ .

Ո՛հ, տխուր զգացմունք մանկական . . . որդեակ իմ Վարդ, այժմ քամին կը բերէ մեզ համբաւ :

Վ Ա Ր Գ .

Միթէ փոթորի՞կն է յափշտակել Վարդանին :

Դ Ս Տ Ր Ի Կ .

Լսենք Տղմուտի խշշոցն, նա մեզ կասէ, թէ նա ուր է այժմ :

Վ Ա Ր Գ .

Միթէ Տղմուտն է տարել Վարդանին :

Դ Ս Տ Ր Ի Կ .

Արդեակ . . . ոտնաձայն եմ լսում :

(Վարդան իջնալով)

Տ Ե Ս Ս Ր Ա Ն Ե Բ .

ԱՌԱՋԻՆԵՔ ԵՒ ՎԱՀՐԱՄ .

Վ Ա Հ Ր Ա Մ .

Ծանօթ, այն ծանօթ է երևում ինձ այս ձայնը :

Դ Ս Տ Ր Ի Կ .

Վահրամ, ես եմ, Գստրիկն եմ, ո՛ւր է Վարդան :

Վ Ա Հ Ր Ա Մ .

Ա՛հ, տիկին, վտանգաւոր է այս տեղը, զգուշացի՛ր քո և Վարդի կենաց, գնանք Համազասպեանի վրանի տակն :

Վ Ա Ր Գ .

Վահրամ, ո՛ւր է Վարդան :

Վ Ա Հ Ր Ա Մ .

Ելէք գնանք, գուցէ այժմ նորան կը բերեն :

Դ Ս Տ Ր Ի Կ .

Ո՛հ, ի՞նչ եմ լսում, նորան կը բերեն, Վարդան ինքն չի՞ կարող գալ, նա վիրաւորած է, նա ընկած է, ա՛հ . . . :

Վ Ա Հ Ր Ա Մ .

Մի՛ յուսահատիր Տիկին, վերքն անվտանգ է :

Դ Ս Տ Ր Ի Կ .

Իսկ յաղթութիւնն ո՛ր կողմը շահեց, եկեղեցի՞ն թէ ատրու շան :

Վ Ա Հ Ր Ա Մ .

Յաղթութիւնը տակաւին անորոշ է, քաջք քաջաց հանդիպեցան, Մատեան անմահ կարծեա՛ծ գունդն քակտեցաւ, փղերից շատերն վնասեցան, Հայեր շատ հունձ ունեցան, Տղմուտն էլ շատ բաժիններ տարաւ ձկներին Պարսիկ զիականրից, Հայ կանանց խումբը հրաշքներ գործեց, նոցա քաջութիւնը Վարդանի աչքից չվրկուեց, երբ վտանգի մէջ պաշարեցան, հրամայեց Համազասպեանին պաշտպանել Հայ տիկնանց անձներ և պատիւն, նորա հետ ճեղքեցինք թշնամեաց գունդն և ազատեցինք անվնաս, երբ դու բոլորովին առնացած աջ և ահեակ զիականր էիր փոռում, յափշտակեցի քեզ :

Դ Ս Տ Ր Ի Կ .

Բայց ո՛ւր են մեր քաջեր, ո՛ւր է Վարդան, ո՛ւր է Համազասպեան :

Վ Ա Հ Ր Ա Մ .

Արևը շուտ աճապարեց հեռանալ երկրից, որին յաջորդեց ամպամած խաւար, զատարման փողեր հնչեցին երկու կողմից, մեր սիրելիք մթութեան

մը ծածկեցան, անգութ լուսնիակը ծածկեց իւր երեսը, չթողուց մեզ ստոյգ տեղեկութիւն ստանալ մեր քաջաց վերայ:

Վ. Ա. Ր. Գ.

Վահրամ, գնանք մօտ Վարդան:

Վ. Ա. Հ. Ր. Ա. Մ.

Այո, գնանք (բերան է վարդին) Տիկին, գնանք:

Գ. Ս. Տ. Ր. Ի. Կ.

Գնանք, բայց ծնկներս ծալում են, սիրտս չի ցանկանում բաժանել այս տեղից:

(Իբրևին, Համազասպեան իբրևին)

ՏԵՍԱՐԱՆ Գ.

Հ. Ա. Մ. Ա. Ջ. Ա. Ս. Պ. Ե. Ա. Ն.

Ո՛հ, չկայ և այս տեղ, ո՛ւր է նա, ո՛ւր է Գոտրիկ, վրանը թափուր է, վեր է առել Վարդին, գնացել է. . . մի՞ գուցէ յափշտակել են Վարդին, Վարդան կանչում է Վարդին, կանչում է Գոտրիկին, գուցէ վերջի պատուէրն է ունի կտակել, վերքը կուրծքին է ստացել, վերաբուծն անյոյս է առողջացնելու, (՛ի՛ էի յառաջ է գնում, հառաչանայ յայնք լսելով յետ է դառնում) հառաչանայ ձայներ եմ լսում, . . . ո՛հ, մեր քաջաց ձայներն են, . . . ո՛հ մեր վիրաւորեալ քաջ զորապետներն են. . . լուսնեակ, բաց արա սև քօղզ (լուսնեակ դուրս է գալիս ամպի ամպից) թող որ վերջին անգամ տեսնեմ մեր քաջաց երեսները, տեսնեմ Վարդանայ պատկերն, (Իբրևին վերադառնալով ի վերադառնալով յետ):

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՀԱՄԱՋԱՍՊԵԱՆ, ՎԱՐԳԱՆ, ԽՈՐԷՆ, ԳԱՐԵԳԻՆ, ՀՄԱՅԵԱԿ,

ՆԵՐՍԷՀ, ԱՐՏԱԿ, ՏԱՃԱՏ, ԱՐՄԵՆ ԵՒ ՎԱՀԱՆ:

Վ. Ա. Ր. Գ. Ա. Ն.

Արեւի զօրականք, թողէք որ փարսին չհանգչիմք այս բլրակի վերայ, փառք է մեզ հայաստանի սուրբ հոգի վերայ ննջել. . . բերէք այս տեղ Գոտրիկին և Վարդին, եթէ կենդանի են մնացել, եթէ չեն յափշտակել (Իբրևին զօրականայ յետ):

Հ. Ա. Մ. Ա. Ջ. Ա. Ս. Պ. Ե. Ա. Ն.

Աւաղ հայոց բազմին և արեւուն, աւաղ անտէրունջ հայաստանին:

ԽՈՐԷՆ ԵՒ ԳԱՐԵԳԻՆ:

Թէ մեր ընկանք, բայց մեր նպատակն յառաջ տարանք, Պարսիկն ալ ևս ոյժ չունի կռուելու, նորա կորուստն աւելի շատ է:

Ա. Ր. Տ. Ա. Կ. Ե. Ի. Ա. Ր. Ս. Ե. Ն.

Բայց մերն աւելի մեծ է, որ Վարդանայ արիւնն էլ խառնուեցաւ մեր զօհի հետ:

Վ. Ա. Ր. Գ. Ա. Ն.

Մի՛ վճատիք, տակաւին ողջ են քաջ նիզակակիցներիցս շատերն, անվընաս է եկեղեցին, որ արեամբ հիմնարկեցաւ և արեամբ պիտի հաստատուի մինչ ցվախճան աշխարհի:

ՏԱՃԱՏ, Վ. Ա. Հ. Ա. Ն. Ե. Ի. Ն. Ե. Ր. Ս. Ե. Հ.

Ո՛հ, փառք քեզ Յի. . . սուս. . . մեր հա. . . սանք մեր նը. . . պա. . . տա. . . կին, (Իբրևին կանգնելու է իբրևին զնորոց ծնկանց վերայ):

Հ. Ա. Մ. Ա. Ջ. Ա. Ս. Պ. Ե. Ա. Ն.

Ո՛հ, ահա քաղցր քուն ննջեցին Տաճատ, Վահան և Ներսէհ, նորա շուտ հասան իւրեանց նպատակին, փառաց յաղթանակին:

Հ. Ա. Մ. Ա. Ջ. Ա. Ս. Պ. Ե. Ա. Ն.

Աւաղ քաջաց հայոց, աւաղ պսակից զրկելոյս:

Վ. Ա. Ր. Գ. Ա. Ն.

Համազասպան, գնա, գտիր Գոտրիկին և Վարդին, ես այլ ևս ոյժ չունիմ նոցա մօտ գնալ, նոցա վերջին տեսութեան փափագս արգելում է հոգիս վերացս լայն դունից դուրս գալու, ընկերներս ննջեցին, ես չկամիմ բաժանել նոցանից, միատեղ մեղանչեցինք, ուրացանք, միասին պատերազմեցանք, միասին վիրաւորուեցանք, լուացինք մեր մեղաց կեղտն մեր արիւնով, միատեղ պիտի թաղուենք, միասին պսակ ստանալու մեծ յուսով: (Համազասպեան իբրևին):

Գ. Ա. Ր. Ե. Գ. Ի. Ն.

Ո՛հ, ննջեցին և Արսէն և Արտակ (Արսէն և Արտակ ընկան էն անյոյս) բայց ահա մեր պսակներ (Իբրևին կանգնելով) զիտէ Վարդան, լուսեղէն պսակներ են իջնում, ահա պսակեցան մեր սիրելիք. . . ահա և մեր պսակներ. . . փառք քեզ Յիսուս, Վարդան, քո պսակն երկու է միմեանց զուգախառնած, զիտիր, Վարդան, (պսակներ են հոգւմ Հանգիստաններն):

Վ. Ա. Ր. Գ. Ա. Ն.

(Վերե կանգնելով) Այո, իմ պսակն երկու է միմեանց խառնուած, թերևս մին Գոտրիկին է, այո, Գոտրիկին է. Գոտրիկ, արի՛ ստացիր պսակ անթառամ: (Գոտրիկ, Համազասպեան, Վարդ և Վահրամ իբրևին):

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԱՌՍԷՆԻՔ, ԳՍՏՐԻԿ, ՎԱՐԳ, ՀԱՄԱՋԱՍՊԵԱՆ ԵՒ ՎԱՀՐԱՄ:

Գ. Ս. Տ. Ր. Ի. Կ.

Ո՛հ. . . աւաղ բազմիս, ի՛նչ եմ տեսնում, Վարդան վիրաւորեալ, (լուով իբրևին վարդան վերայ):

Վ Ա Ր Գ .

Հայրիկ, Հայրիկ, մեք շատ որոնեցինք քեզ . (ինչն վարդանի բերել):

Վ Ա Ր Գ Ս Ն .

Մի՛, Գասրիկ, մի՛ լար, ես յաղթեցի, եկեղեցին ազատ է:

Դ Ս Տ Ր Ի Կ .

(Լաւլ) Յաղթեցիր, բայց շատ թանկ գնեցիր յաղթութիւնդ:

Վ Ա Ր Գ Ս Ն .

Եկեղեցին և Հայրենիք պաշտպանելու, ուրացութեանս կեղտն մաքրելու Տամար դեռ շատ սակաւ էր իմ արիւնը:

Վ Ա Ր Գ .

Մայրիկ, մի՛ լար, ահա գտանք Վարդանին:

Վ Ա Ր Գ Ս Ն .

(Համբարձման օրը) Որդեակ իմ Վարդ, Հայրենեաց Վարդ լինիս անփուշ, ապրի՛ր հայ հոգւով, Հորդ յիշատակ և մօրդ սփոփանք լինիս:

Վ Ա Հ Ր Ա Մ .

(Ընկերներէ վերայ բերելով) Ո՛հ, ընկել ես մեր քաջեր, (հուշ):

Դ Ս Տ Ր Ի Կ .

Աւանդ, զրկեցայ թէ Վարդանից, և թէ պսակից, անգո՛թ Վահրամ, ինչի՞ յափշտակեցիր զիս այն հանդիսից, ուր պսակներ էր բաշխում հանդիսողիրն Յիսուս, քանի՛ քանի՛ հարսներ բաղդատուր են ինձանից, որ իւրեանց փեսաների հետ միասին պսակ ստացան այսօր, իսկ ես Ս. Սահակայ Հարսն և աշակերտ, և քաջ Վարդանի կենակիցս չարժանացայ նոյն բաղդին. ա՛հ, ես շատ եմ կարգացել Շամունէի պատմութիւնը, ես յօժար էի Վարդանի հետ և զիս և Վարդս իմիասին զոհ հանել Հայրենեաց փրկութեան սեղանի վերայ, որի համար Տարօնից մինչ Արտազ փափագանօք դիմեցի (հուշ):

Վ Ա Ր Գ Ս Ն .

Արդարև Սահակայ արժանի հարսն, Վարդանայ արժանաւոր ամուսին, կեցցես Գասրիկ, ես շատ գոհ սրտով կբաժանուեմ քեզանից:

Դ Ս Տ Ր Ի Կ .

Բայց ինձ ևս տար հետդ . . . :

Վ Ա Ր Գ .

Ո՛ր էք գնում, ես էլ կբաժնամ ձեզ հետ, ինձ էլ տարէք, (հուշ):

Վ Ա Հ Ր Ա Մ .

Համազասպան, ոտնաձայն թշնամեաց է (սորի որոտն և յայնէր էն լըստտ):

Հ Ա Մ Ա Ջ Ա Ս Պ Ե Ա Ն .

Քայլերը թշնամու են, իսկ բարբառներ Հայոց . . . լուսնեակ, սպասիր, մի՛ մտնիր ամպի տակ, Արեգակը լսեց Յեսուին, դու լսիր Վարդանին, (Քարակ մտնել ինձ լսի՞ թափում է լուսն):

Վ Ա Ս Ա Կ

(Հեռուից) Անձնատուր, անձնատուր և զինաթափ:

Վ Ա Ր Գ Ս Ն .

Ո՞վ է այդ վատ արանց, Հայն մինչդեռ է Հայ և կենդանի, չէ անձնատուր, զէն ի ձեռին զիմէ իմաստ, (սորը ինչնէ պատեկց, զօրոտն վեր ինչնէ շին զէն ի յեռն պարտար):

Հ Ա Մ Ա Ջ Ա Ս Պ Ե Ա Ն .

(Գոհելով) Դ՛ո՛ւք անձնատուր, ո՞վ վատք արանց (սոր հանած ինչնէ):

Ի Ն Ն Ջ Ի Ն Ի Ո Ր Ք .

Օ՛ն ի վրէժ քաջ նահատակաց Հայոց (ինչնէ):

Վ Ա Հ Ր Ա Մ

Ջինաթափ, զինաթափ կամ հոգեթափ (ինչնէ):

Դ Ս Տ Ր Ի Կ .

Ի վրէժ Վարդանայ, ի պսակ նահատակութեան (ինչնէ):

Վ Ա Ր Գ Ս Ն .

(Կոտի ինչնէ, Բայց ինչնէ) Կաց, գասրիկ, կաց, մի՛ . . .

Գ Ա Ր Ե Գ Ի Ն .

Իմ հունձս սակաւ էր (սորը հանելով պատեկց ինչնէ, Բայց ինչնէ):

Վ Ա Ր Գ Ս Ն .

Կաց, Գարեգին, ննջում է և Խորէն:

Խ Ո Ր Է Ն .

Կա . . . ցէք բար . . . ես և քաջ . . . փառք . . . Յի . . . սուս (ինչնէ):

Վ Ա Ր Գ .

Հայրիկ, ձայն տանք քաջերին, հերիք ննջեն:

Վ Ա Ր Գ Ս Ն .

Այսօր շատ աշխատեցան, թող ննջեն ի քուն քաղցր:

Վ. Ա. Ր. Գ.

Ապա և զու շե՛ս ննջում, Հայրիկ:

Վ. Ա. Ր. Գ. Ա. Ն.

Ցանկամ և ես ննջել, կէս զիշեր է, իսկ զու արթնուն կաց, յետոյ պիտոյ ես Հայրենեաց:

Վ. Ա. Ր. Գ.

Օ՛հ, լուսնեակն ամպի տակից զուրս եկաւ, բայց ի՛նչքան տխուր է (որտե՛ս արտիւն և շնորհ յայնքէ իւրաքանչիւր) Հայրիկ, գողում, գողում եմ լուսն, մայրիկիս ձայնն է... ահա եկան (Համազասպեան, Վահրամ, զինորտ և Վասիլ շնորհալու իւրաքանչիւր):

ՏԵՍՍԱՐԱՆ Զ.

ԱՌԱՋՈՒՆՔ, ԴՍՏՐԻԿ, ՀԱՄԱՊԱՆՈՒԹԵԱՆ, ՎԱՀՐԱՄ:

ՎԱՍԱԿ ԵՒ ԶԻՆԻՈՐՔ:

ՀԱՄԱՊԱՆՈՒԹԵԱՆ:

Ահա զոհ արեան քաջաց Հայոց, ահա թշնամին ազգի և կրօնի, (Վասիլ յեաներ կարծի ներկայացնու է):

Վ. Ա. Ս. Ա. Կ.

Համազասպեան, ես Հայ եմ, Քրիստոնեայ եմ, անիծեալ լինի Պարսից կրօն և ազգն, թող ինչ որ քամ արշաւարեմ, մի թափիր մեղաւորի արիւնը, Աստուած մեղաւորի դարձին է սպասում, մոլորեալ ոչխարին է որոնում, արձակիր զիս:

Վ. Ա. Ր. Գ. Ա. Ն.

Ո՛վ է այդ բարբառն Հայու է, շողքորդութիւնն և լեզուն Վասակին է, հազուսան Մոզի է, Պարսկի է:

Վ. Ա. Ս. Ա. Կ.

Քաջ Վարդան, բարեսիրտ Վարդան, անյիշաչա՛ր Վարդան, Վասակն եմ ես, զու մի լինիր ինձ վրէժխնդիր, խիղճս է իմ վրէժխնդիր, ձեր անմեղ արիւնն է ինձ վրէժխնդիր. Քրիստոնէական կրօնի սրբութիւնն է ինձ վրէժխնդիր, ապագայն է իմ վրէժխնդիր, երկինք և երկիր են ինձ վրէժխնդիր, եղբայրասպան Վայնն եմ ես, հազարաւոր արիւններ թափեցի փառասիրութեանս կրիւք կուրացած, ինձ սպանողն Աստուծոյ զէմ կը գործէ, հրամայէ արձակել զիս, գնամ վանքերի մէջ ապաշխարեմ, լամ ու ողբամ մեղքերս, կամ գնամ իսպառ կոտորեմ պիղծ Մոզերին, ազատեմ Հայրենիք և կրօնը, որս կործանման պատճառ եղայ յիմարացած, հրամայեցէք, որ արձակեն զիս:

Վ. Ա. Ր. Գ. Ա. Ն.

Համազասպեան, այդ օձն, այդ շար իժն ինձ պարգև՞ բերիր, բաց թող հեռացուր, մի թողուր որ իւր զգուելի ներկայութեամբը պղծէ այս քա-

ջաց վերջին ըոպէներն, արձակիր այդ շողքորդ աղուխուն, թող գնայ, թագաւորէ աւերակաց վերայ, դորա արիւնը մի՛ խառնիր մեր արեան հետ, դա արժան չէ ոչ Քրիստոնէութեան համար արիւն թափելու և ոչ իսկ մոգութեան, Աստուած է դորա վրէժխնդիրն. խնդրեմ, Համազասպեան, լսիր իմ վերջին խնդիր, բաց թող այդ օձն:

Գ. Ա. Ր. Ե. Գ. Ի. Ն.

Ո՛հ, բաց թողէք այդ իժն, դա արժան չէ Հայաստանի սուրբ հողի վերայ իւր պիղծ շունչը փչելու:

Հ. Ա. Ս. Ա. Կ.

(Գրեթէ քեանց վերջելով) Մի՛ խանգարէք վերջին ըոպէներս ազգուաց դաւաճանի ներկայութեամբը, բաց թողէք դորան, որ Յազկերտի բարկութեան զոհուի, որ աշխարհին ծաղր ու ծանակ լինի:

Վ. Ա. Ս. Ա. Կ.

Ա՛հ, Հմայեակ, բարեսիրտ Հմայեակ, ես արժանի եմ այդ բոլոր յանդիմանութեան, բայց ներեցէ՛ք, ես Հայ եմ, Քրիստոնեայ եմ, օգնեցէ՛ք ինձ, որ հոգիս չկորչի դժոխքի մէջ, եթէ չկարենամ պսակ ստանալ, դէժ մեղքերս քաւեմ, արձակեցէ՛ք զիս:

Վ. Ա. Ր. Գ.

(Գարբիէ երեք քեանով) Մայրիկ, այդ ի՞նչ արիւն է, որ հոսում է ճակատիցդ և կուրծքիցդ:

Դ. Ս. Տ. Ր. Ի. Կ.

Վարդանայ ինձ պարգևած այս երկսայրի սուրս (շուրջ քաւով) գետին փոխց դաւաճան Գաղիշոյ իշխանին, և ստացայ այս վերքս այդ օձից, (շուրջ քաւով Վասակն) առ սուրբ Վարդան, (քեանով վարդանայ ծոխ) ես շատ զոհ եմ բաղդիցս, ես էլ կը գամ քեզ հետ, մեծ պատիւ և փառք է ինձ քաջի հետ ապրել, քաջի հետ մեռնել:

Վ. Ա. Հ. Ր. Ա. Ս.


(Բանելով Վասակայ լեկոյ) Տէր իմ Վարդան, մեք եթէ բաց թողունք այս սառած օձն, կրկին փնաս է Հայրենեաց, փնաս է մեր սուրբ Կրօնին, թող աիկին Գասրիկի արեան զոհուի դա:

Դ. Ս. Տ. Ր. Ի. Կ.

Ո՛չ, ո՛չ, Վահրամ, իմ արիւնս այդպիսի դաւաճանի արիւն զոհ չէ պահանջում, բաց թողէք դորան, հերիք է մեր ընտանեկան խաղաղութեան վերջին ըոպէներ խոռվէ:

Վ. Ա. Ր. Գ. Ա. Ն.

Բաց թողէք, դա էլ չէ կարող փնասել եկեղեցւոյն. դա դժոխքի դրան պէս զարնեցաւ եկեղեցւոյ ամուր վիմի վերայ և փչրեցաւ:



Հ Ա Մ Ա Ջ Ա Ս Պ Ե Ա Ն .

( Արխի-մե վարդապետ շրջաններ ) Հեռացիր տղամթալալ հող :

Վ Ա Ս Ս Կ .

( Փոքր էն հեռանալով , ընդհին ) Փանք քեզ անմահ Միհր , ազատեցիր զիս ,  
Թագաւորութեանս օրը կը կանգնեմ քեզ մի փառաւոր մեհեան Վաղար-  
շապատի մէջ ( իւր փոքր ) :

Հ Մ Ա Յ Ե Ա Կ Ե Ի Գ Ա Ր Ե Գ Ե Ն .

( Ընդհին-ս էն , երկու- շին-որ հօրենալով շրջաններ քաղաքացի-ս էն իրանց ծննդ-  
վերայ ) : Փանք . . . քեզ . . . Տէր . . . Յի . . . սուս : ( հոգիներ կանաքեն ) :

Գ Ս Տ Ր Ի Կ .

( Վարդապետ հօրենալով ) Բայց զիրկը Վարդան , ամուսնական սուրբ սերն  
մեզ միացրեց , Հայրենիք և Կրօն մեր նպատակն օրհնեց , մահը թող կըքէ  
մեր միութիւնը մի գերեզմանի մէջ , տուր ձեռքդ Վարդան , ( Վարդապետ  
յեռան քանակով քանակէն եւր որոհ վերայ ) զուրս կորզիր այդ նեան :

Վ Ա Ր Գ Ա Ն .

( Չախ յեռանով շրջան-ս Գործիկն պարանոցն և աջ յեռանով քանակէն ներս ) Հա-  
յեր , այսպէս սիրեցէք Հայրենիք ու Եկեղեցին , այսպէս սիրեցէք ձեր  
ամուսիններ , Հայ ծնաք , Հայ արեք , Հայ մտքք , Կրօնի սրբութիւնը  
Հայութեան հոգի ընդունեցէք , եթէ ուզում էք միշտ գոյութեան մէջ  
մնալ , ( որ-որ տաշելով ներս ) Օ՛հ , քաղցր միութիւն . . . ( շրջանով միտանոց )

Գ Ս Տ Ր Ի Կ .

Հայրենիք . . Կրօն , Վարդան . . . Վարդ . . . Պսակ . . . Յիսուս ( շին-  
քիւնով վարդապետ ) :

Վ Ա Ր Գ .

( Ընդհին-ս է վարդապետ և Գործիկն լանջոց վերայ ) Ինձ էլ տեղ տուէք ննջե-  
լու . . . :

Վ Ա Ր Գ Ա Ն .


( Մեծին ) Մնայք . . քար . . հաւ . . . մեր քաջեր . . . խա . . զա . . զու-  
թիւն . . . ձեզ , Հա . . . յա . . . տան . . . քաղցր . . . հայրե . . . նիք , ազգ  
. . . կրօն , փանք . . . քեզ . . . Տէր . . . ընկալ . . . Տէ . . . ր ( իւր փո-  
քան քանակով իւր ծածկէ-տեղէն ) :

Հ Ա Մ Ա Ջ Ա Ս Պ Ե Ա Ն . Վ Ա Հ Բ Ա Մ Ե Ի Ջ Ի Ն Ի Ո Ր Բ .

Աւագ , խաւարեցաւ Հայոց արև :

( Վարդապետ ինքն )

Վ Ե Ր Ջ .



ՏՊՈՒԱԾ ԵՆ

1. Համառօտ Գերականութիւն:
2. Քրիստոնէական վարդապետութիւն ընդարձակ, հանդերձ վկայութեամբք Ս. Գրոց, Գինն է 1 բոլորէ. 20 հոդէի:
3. Ընդդիմախօսութիւն Ս. Վարդանայ ընդ Վասակայ, Գինն է 30 հոդէի:
4. Ողբերգութիւն Ս. Վարդանանց զօրավարաց, Գինն է 60 հոդէի:

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԼՏԻՆՍ ԵՆ

1. Հայոց Վարդեր եւ Փշեր, այսինքն իսկզբանէ անտի Հայ ազգութեան կամ եկեղեցւոյ պաշտպանող եւ վնասող երեւելի Հայոց կենսադրութիւն եւ ապագայի տուած վարդէ կամ քչէ պատկերներ:
2. Համառօտ Քրիստ. վարդապետութիւն, Գասազիրք լինելու յարմարութեամբ:
3. Հրահանգ ուսման Հայոց լեզուի, նոր ոճով:
4. Ողբերգութիւն Սրբոց Ղէոնդեանց, 3 գործողութեամբ:
5. Ողբերգութիւն կամ եղերելի վախճան ուրացող Վասակայ, 3 գործողութեամբ:
6. Ողբերգութիւն Աբելի 3 գործողութեամբ:
7. Ողբերգութիւն Յովսեփայ գեղեցկի եւ Փառաւորութիւնն, 3 գործողութեամբ:
8. Կատակերգութիւն Սաւրի գիւղացի խաչազոյների, 3 գործողութեամբ:
9. Կատակերգութիւն իմաստակ վարժապետի, սուտ Բժշկի եւ Ագահի կամ Հրաշափառ խայտառակութիւն, 1 գործողութեամբ:
10. Կատակերգութիւն Փաստաբանի, 3 գործողութեամբ:
11. Կատակերգութիւն բանտապետի, 2 գործողութեամբ:
12. Աղիւսակ 25 ամաց Օրացուցի:

Մեր Հասցէն է ի Վասպուրջապոստ Ս. Գնաւնի:

8088

2013

